

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՏԴ 78
ԳՄԴ 85.31
Ա 192

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ


ԱՆՆԱ ԱԴԱՍՅԱՆ, ԱՐՄԻՆԵ ԲԱԲԱՅԱՆ

Խմբագիր՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ա.Գ.Ասատրյան

Գրախոսներ՝
արվեստագիտության թեկնածու Տաթևիկ Շախկույյան
արվեստագիտության թեկնածու Գայանե Ամիրադյան

ԼՈՒԻԶԱ ԶԵՅԹԱՂՅԱՆ ԽՄԲԱՎԱՐԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Ադամյան Աննա, Բաբայան Արմինե
Ա 192 ԼՈՒԻԶԱ ԶԵՅԹԱՂՅԱՆ. ԽՄԲԱՎԱՐԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ /.-
Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022.- 64 էջ + 12 էջ նկար:



Գրքում առաջին անգամ լուսաբանվել է անվանի խմբավար և մանկավարժ Լուիզա Չեյթադյանի կյանքի և գործունեության ուղին, ուսումնասիրվել և ընթերցողին են ներկայացվել նրա անձնական արխիվը, նամականին, լուսանկարները, ուսանողների, գործընկերների և հարազատների հուշերը, մամուլի արձագանքները, համերգային ազդագրերը և ծրագրերը: Գրքում ներկայացված է նաև նրա մեթոդական ժողովածուների բովանդակությունը:

Հասցեագրվում է երաժիշտներին, երաժշտագետներին, խմբավարներին և պարզապես երաժշտասեր հանրությանը:

Նվիրվում է Լուիզա Չեյթադյանի ծննդյան 95-ամյակին:

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

ISBN 978-5-8080-1479-4
© Ադամյան Աննա, 2022
© Բաբայան Արմինե, 2022

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայ ժողովուրդին իր գոյության հազարամյակների ընթացքում ստեղծել է հարուստ բանահյուսություն և գրականություն, ինքնատիպ դասական ճարտարապետություն, գեղանկարչություն, քանդակագործություն, թատերական և կիրառական արվեստ, զարգացրել գիտության բազմաթիվ ճյուղեր: Չուզահեռաբար սկզբնավորվել և զարգացել է նաև երաժշտական հարուստ մշակույթը, որի արմատները գալիս են դարերի խորքից: Բազմաձայն խմբային երգեցողությունը հայ իրականության մեջ ձևավորվել և արմատավորվել է 19-րդ դարի վերջին տասնամյակներում՝ կապված ազգային պրոֆեսիոնալ երաժշտության կազմավորման հետ: Այդ ժամանակահատվածում բազմաձայնությունը ոչ միայն տեղ գտավ հայ ժողովրդի կենցաղում, այլև իր տեղը զբաղեցրեց նաև եկեղեցական երգեցողության մեջ: Այն մեծ լիցքեր հաղորդեց ազգային երաժշտության հետագա զարգացմանը:

XIX դարի վերջին հայ իրականության մեջ սկիզբ առավ մի լայն շարժում, որի նպատակն էր հայ ժողովրդական երգի հայտնաբերումը, գրառումը, մշակումն ու հանրահռչակումը: Այդ շարժման նախաձեռնողներից մեկն էր ականավոր կոմպոզիտոր և խմբավար Քրիստափոր Կարա-Մուրզան:

Նա առաջ քաշեց հայ երաժշտության մեջ բազմաձայնությունը ներմուծելու և արմատավորելու խնդիրը, որ երաժշտության բնագավառում դարաշրջանի առաջադրած կարևոր պահանջներից էր և հսկայական նշանակություն ունեցավ հայ երաժշտական արվեստի զարգացման հետագա գործում:

Բազմաձայն երգեցողության զարգացման և տարածման գործում մեծ ներդրում ունեցան նաև մեծանուն կոմպոզիտոր Մակար Եկմալյանը և հատկապես՝ մեծն Կոմիտասը: Նրանց ստեղծած երգչախմբերն իրենց կնիքն են թողել ազգային երգ-

չախմբային արվեստի վրա, իսկ հեղինակած խմբերգերն ու պատարագները հայ դասական երաժշտության զարդն են:

Ք. Կարա-Մուրզայի, Մ. Եկմալյանի, Կոմիտասի գործը թե՛ երաժշտական մանկավարժության, թե՛ համերգային ու ստեղծագործական ասպարեզներում շարունակել են նրանց հաջորդած գրեթե բոլոր հայ կոմպոզիտորները: Հայաստանի խորհրդայնացումից հետո նշանակալի աշխատանք է ծավալվել հայ մշակույթի զարգացման ուղղությամբ:

Այդ ազգանվեր գործի կազմակերպիչներն էին կոմպոզիտորներ և խմբավարներ Ռոմանոս Մելիքյանը, Արմեն Տիգրանյանը, Սպիրիդոն Մելիքյանը, Ստեփան Դեմուրյանը, Ազատ Մանուկյանը, Մարտին Մազմանյանը, Միքայել Միրզայանը, Գուրգեն Միրզոյանը, Կարո Ջաքարյանը, Վահան Ումր-Շատր, Դանիել Ղազարյանը, Երվանդ Սարգսյանը և շատ ուրիշներ: Նրանք բոլորն էլ աշխատել են մեծ և անօրինակ նվիրումով:

Այդ տարիներին շարունակաբար կազմավորվել են երաժշտական տարաբնույթ խմբեր և երգչախմբեր: Հանրապետությունում հիմնադրվել են երգչախմբային ընկերությունը, պետական ակադեմիական կապելլան, երգի-պարի պետական անսամբլը, պրոֆեսիոնալ բարձր մակարդակ ունեցող բազմաբնույթ ինքնագործ երգչախմբեր և այլ համույթներ:

Հայ երգչախմբային արվեստի զարգացման և տարածման գործում հատկապես մեծ է Արամ Տեր-Հովհաննիսյանի, Թաթուլ Ալթունյանի և Հովհաննես Չեքիջյանի ներդրումը:

Նրանց կողքին մասնագիտական գործունեությունը սկսող երիտասարդ խմբավարները շարունակեցին զարգացնել արդեն ձևավորված երգչախմբային ավանդույթները՝ իրենց ավանդը թողնելով հետագա սերունդներին: Այդ նվիրյալների շարքում իր գործունեությունը սկսեց և իր մասնագիտական ուղին կերտեց նաև խմբավար և մանկավարժ Լուիզա Զեյթադյանը:

Գլուխ 1.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒՂԻՆ. ԽՄԲԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԿԻԶԲԸ

Հայ խմբերգային արվեստի վառ ներկայացուցիչ, խմբավար Լուիզա Զեյթադյանը ծնվել է 1926 թվականի հունիսի 30-ին Լենինականում (այժմ՝ Գյումրի):

Հայրը՝ Մկրտիչ Զեյթադյանը, ծնվել և մեծացել էր Թիֆլիսում, որտեղ կրթություն էր ստացել Ներսիսյան դպրոցում: Մայրը՝ Շուշանիկ Փայանը, ծնունդով Ալեքսանդրապոլից էր, սովորել և ավարտել էր իգական գիմնազիան: Ծնողները Երևան էին եկել՝ կրթությունը շարունակելու, և ծանոթացել էին Երևանի պետական համալսարանում ուսանելու տարիներին: Հայրը սովորում էր իրավաբանական, իսկ մայրը՝ բժշկական բաժնում:

Հայրը Երևանի պետական համալսարանն ավարտելուց հետո աշխատել է որպես քննիչ, հետագայում՝ կարևորագույն գործերով քննիչ, դատախազ, իսկ մայրը՝ որպես մանկաբույժ և հետագայում ղեկավարել է հիվանդանոցի մանկական բաժանմունքը:

Փոքրիկ Լուիզան հոր ցանկությամբ սկսել է երաժշտություն սովորել Լենինականի երաժշտական դպրոցում: Նա լավ ձայն ուներ և աչքի էր ընկնում իր երաժշտական ունակություններով:

Լուիզան 11 տարեկան էր, երբ հայրը 1937 թվականի ստալինյան բռնաճնշումների գոհ դարձավ, նրան աքսորեցին Սիբիր, բայց մայրը և Լուիզան կարողացան խուսափել այդ ճակատագրից:

Հայրենական պատերազմի տարիներին բազմաթիվ վիրավոր զինվորներ էին բերում Լենինականի հոսպիտալ, և երիտասարդ Լուիզան մորաքրոջ աղջկա՝ Թերեզայի և ընկերուհիների հետ գնում էր՝ օգնություն ցույց տալու. աղջիկները վիրավորների համար նամակներ էին կարդում և գրում, նաև համերգներ էին տալիս, երգում և պարում էին, իսկ գիշերները ռումբերից առաջացող հրդեհները կանխարգելելու նպատակով հերթապահում էին տանիքների վրա:

Լուիզան սովորում է կապավորի մասնագիտությունը և քանի որ հրաշալի լսողություն ուներ՝ ցուցաբերում է հաջողություններ և ցանկանում է մեկնել ռազմաճակատ, սակայն այդ ցանկությունը չիրագործվեց:

Հետաքրքրական մի դրվագ կա նրա մասնագիտության ընտրության պատմության մեջ: Սկզբում Լուիզան ընդունվում է բժշկական ինստիտուտ, սակայն կարճ ժամանակ անց շրջադարձային որոշում է կայացնում՝ շարունակել երաժշտական կրթությունը, և 1945 թվականին ընդունվում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի մեներգեցողության բաժինը:

Ուսանողական տարիներին հանդիպում է Ստեփան Մերդինյանին, որը մասնագիտությամբ օպերատոր էր և աշխատում էր Հայֆիլմում: 1947 թվականին երիտասարդներն ամուսնանում են, 1948-ին ծնվում է նրանց որդին՝ Աշոտը: Այս հանգամանքների բերումով Լուիզայի ուսումնական ընդհատվում է, և 1949 թվականին նա նորից ընդունվում է կոնսերվատորիայի դիրիժոր-խմբավարական բաժին: Ուսման հետ համատեղ 1950-1952-ին նա աշխատում է Հայֆիլիարմոնիայի պետական երգչախմբում՝ որպես երգչուհի:

Ընտանեկան երջանկությունը, ավա՞ղ, երկար չի տևում: Կարճ ժամանակ անց թոքախտը խլում է ամուսնու կյանքը, և փոքրիկ որդու հետ մենակ մնալով՝ Լուիզան սկսում է կյանքի դժվարությունների հաղթահարման ուղին: Ամուսնու վաղաժամ կորուստը, գավակի խնամքը ամրացրել էին Լուիզայի կամքը: 1954 թվականին ավարտելով կոնսերվատորիան՝ նա փոքրիկ որդու հետ վերադառնում է Լենինական՝ մոր մոտ: Մինչ այդ, 1947 թվականին՝ աքսորից տասը տարի անց, վերադարձել էր Լուիզայի հայրը և հաստատվել Կիրովականում (այժմ՝ Վանաձոր):

1954-1958 թվականներին Լուիզան աշխատանքի է նշանակվում Լենինականի Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանում, որտեղ որպես վոկալ-խմբավարական բաժնի վարիչ աշխատում է մինչև 1958 թվականը:

1958 թ. Լուիզա Ձեյթադյանը հանդիպում է իր երկրորդ ամուսնուն՝ անվանի հիդրոշինարար Սիսակ Մարգսյանին: Ամուսնությունից հետո Լուիզան որդու հետ մշտական բնակության է տեղափոխվում Երևան: 1959 թվականին ծնվում է Լուիզայի և Սիսակի դուստրը՝ Նունեն:

Լուիզա Ձեյթադյանը Երևանում աշխատանքի է անցնում Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում: 1958-80 թվականներին աշխատում է որպես խմբավարական բաժնի վարիչ, դասավանդում խմբավարություն և ղեկավարում ուսումնարանի երգչախումբը: Դասավանդում է նաև երգչախմբագիտություն և երգչախմբի հետ աշխատելու մեթոդիկա:

Դստեր՝ Նունեի հիշողություններում վառ են դրվագները, երբ ուսանողներին իր տուն էր հրավիրում դասերից հետո, հաճախ հյուրասիրում, նաև զբաղվում էր նրանց ինքնա-

կրթության և ընդհանուր դաստիարակության հարցերով: Հաճախ էր միացնում ձայնապնակներ, որից հետո քննարկում էր լսած ստեղծագործությունը, որպեսզի ուսանողներն ավելի լավ ճանաչեն դասական երաժշտությունը, գեղարվեստական գրականություն էր առաջարկում ընթերցանության համար, իսկ դասերը նույնիսկ հանձնարարում էր ուսանողներին ուղեկցել պատկերասրահներ, ցուցահանդեսներ: Կարելի է փաստել՝ Լուիզա Ձեյթադյանն իր ուսանողների համար ոչ միայն նեղ մասնագիտական դասատու էր, այլև երաժշտության աշխարհի մեծ ծովում մի հուսալի փարոս, որն օգնում էր նոր կայացող երաժիշտներին կողմնորոշվելու, ձևավորելու լայն աշխարհայացք և բարձր ճաշակ, զգալու և կախարդվելու երաժշտության հմայքով: Նա երբեք չէր դադարում զբաղվել նաև ինքնակրթությամբ:

Չնայած իր բազմազբաղ մասնագիտական գործունեությանը՝ Լուիզա Ձեյթադյանը հրաշալի տնտեսուհի էր, չափազանց ընկերասեր և հյուրասեր անձնավորություն: Երգչախմբի կամ ուսանողների հետ միշտ տնային խնջույքներ էին կազմակերպում, որտեղ անպակաս էին կատակային ոճով երգերը, հումորը, անմիջական շփումը:

Չափազանց ամուր և ուժեղ բնավորություն ուներ և ամեն մի գործի մեջ հոգի էր դնում, արագաշարժ էր և բոլոր գործերում շնորհալի: Լավ գործում էր, համեղ պատրաստում ու թխում: Հրաշալի կար ու ձևի վարպետ էր, նույնիսկ ուսանողները և դուստրը հիշում են տարբեր առիթներով նրա կարած հագուստները: Պատմում են, որ Լուիզա Ձեյթադյանը՝ որպես իսկական գյուրեցի, նաև յուրահատուկ հումորի տեր կին էր:

Դստեր հիշողություններից մեկում՝ Հայաստանի մի գյուղում Լուսաշխի տան երգչախմբի համերգի ժամանակ, երբ

երգչախումբն արդեն բեմում էր, և սպասում էին դիրիժորի բեմելին, հանդիսատեսը և երգչախումբը սկսում են անհանգստանալ. խմբավարը չկար: Մի քանի րոպե անց երգչախմբի մասնակիցները, դեպի կուլիսներ նայելով՝ նկատում են, որ խմբավարի կոշիկի կրունկը մնացել է հատակի մեջ եղած անցքի մեջ, և նա պարզապես չի կարողանում դուրս հանել կոշիկը: Դա նկատելով՝ երգչախումբը սկսում է ծիծաղել, իսկ Լուիզա Ջեյթադյանն այնտեղից սկսում է գլխով անել և ողջունել հանդիսատեսին:

Պատմում են, որ մայրական գորովանքով էր վերաբերվում իր երգիչ-երգչուհիներին և ուսանողներին: Դստեր հիշողությամբ Լենինգրադում կայացած հյուրախաղերին կտրվել էր երգչախմբի երգիչներից մեծ մասի ձայնը, և Լուիզա Ջեյթադյանը գնացել էր գազար գնելու, որպեսզի բուժեն երգիչների կոկորդները: Չեխոսլովակիայում համերգների ժամանակ, երբ երգչախմբին սառը գարեջուր էին հյուրասիրում, նա հատուկ շրջում էր և արգելում երգիչներին խմել, որպեսզի չհիվանդանան:

Մեծ է եղել Լուիզա Ջեյթադյանի դերը նաև իր թոռնուհու՝ Արմինե Բաբայանի մասնագիտական կյանքում: «Կնոջ համար խմբավար լինելն այնքան էլ դյուրին գործ չէ: Պետք է լինել կայուն անձնավորություն, ունենալ ուժեղ և հաստատակամ բնավորություն, կարողանալ հաղթահարել բոլոր դժվարությունները, համոզիչ և խարիզմատիկ լինել խմբի համար: Միաժամանակ պետք է սիրով և եռանդով լցված լինես, որպեսզի կարողանաս հսկայական ձայնային անսամբլը ղեկավարել: Տատիկը դժվար կյանքի ուղի է անցել, միայնակ է մեծացրել որդուն, այդ ամենի հետ մեկտեղ ձգտել է լավ մասնագետ դառնալ: Ներքին խստու-

թյան հետ մեկտեղ կարողացել է իր ուսանողներին փոխանցել դրական լիցքեր և լավատեսություն:

Տատիկը շատ էր կարևորում ինքնակրթությունը. ամեն տարի դպրոցական արձակուրդներին նա ինձ տանում էր երգչախմբի փորձերին կամ երգչախմբային ընկերություն՝ դասերի: Հատկապես շատ տպավորիչ էր ինձ համար փորձասենյակում տիրող ստեղծագործական մթնոլորտը, իսկ համերգների ժամանակ ինձ վստահվում էր շատ կարևոր մի գործ՝ ամենագեղեցիկ կատարումից հետո ծաղկեփունջը ձեռքիս բարձրանալ բեմ, շնորհավորել տատիկին և ստանալ նրա ջերմագին համբույրը:

Երբ մեզ տեսնում էին միասին, նա միշտ ասում էր, որ ես իր ընկերուհին եմ: Այդ պահին ես զգում էի, որ ուժ եմ տալիս նրան: Բավական մեծ շրջապատ ուներ. Երևանում, որտեղ էլ գնայինք, մարդիկ ճանաչում էին և ժպտում, նույնիսկ հյուրասիրում: Ինձ տանում էր թատրոն, պատկերասրահ, համերգներ ու նաև իր հանդիպումներին, և ես շնորհակալ եմ տատիկին, որ նա այդ ժամանակը հատկացրել է ինձ և իմ մեջ ձևավորել ճաշակ: Նա իր մասնագիտության մեջ կայացած կնոջ լավագույն օրինակն էր. սիրված մայր, գեղեցիկ կին, հրաշալի մասնագետ-դասախոս և բեմական արտիստ:

Ասում էր.

–Հիշի՛ր, ուր էլ գնաս և իմ անունը տաս, քո առջև դռներ կբացվեն:

Միրում էր փոխանցել իր գիտելիքները, կիսում էր իր փորձը, ուշադիր էր յուրաքանչյուրի հանդեպ, ի վերջո, տալիս էր ամենքին իր սրտից մի կտոր: Ուներ բարձր պրոֆեսիոնալիզմ, յուրաքանչյուր երեխայի հանդեպ յուրահատուկ մոտեցում,

հսկայական համբերատարություն և պատասխանատվության զգացում:

Ինձ դուր էր գալիս այն եռանդը, որ նա ներդնում էր իր գործի մեջ: Կարծես այդ իմաստով ես էլ նրան նման եմ, փոքր հասակից ինքս էլ ընկերուհիներին հավաքելով ստեղծում էի երգեցիկ խումբ և խնդրում էի տատիկին, որ լսի: Միշտ մեծ լրջությամբ էր դիտում և ասում էր, որ ինձնից լավ խմբավար դուրս կգա, երևի ես շարունակեմ իր գործը: Ես էլ, անկեղծ ասած, շոյվում էի, բայց դեռ բոլորովին չէի պատկերացնում ինձ այդ դերում: Այդ տարիքում դեռ լուրջ չէի վերաբերվում պարապմունքներին, չէի սիրում շատ ժամանակ տրամադրել երաժշտական առարկաներին:

Սակայն, իր մահվանից առաջ ինձ կանչեց և խնդրեց, որ խոստանամ շարունակել իր գործը: Ես այդ ժամանակ 12 տարեկան էի, հիշում եմ, թե ինչպես այդ խոսքերն ինձ ոգեշնչեցին, և ես վճռականորեն որոշեցի նվիրվել երաժշտությանը: Սկսեցի լրջորեն պարապել, հաճախել երգչախմբի պարապմունքներին, օրերով լսում էի նաև նրա գրադարանի ձայնասկավառակները:

Հիշում եմ, ինքը շատ ստեղծագործ անձնավորություն էր, բարձր ճաշակով և շատ հմտորեն էր կազմում համերգային երգացանկը: Երբ երկրաշարժը տեղի ունեցավ, տատիկը ականատես եղավ իր մտերիմ ընկերուհու աղջկա և թոռան կորստին և որոշեց մեծ բարեգործական համերգ կազմակերպել, և դա նրան հաջողվեց: Վստահ եմ, դեռ շատ գործեր կարող էր անել և նույնիսկ խմբավարական արվեստը զարգացնող ծրագրեր կստեղծեր:

Աշխատելով Խորհրդային Միության ժամանակահատվածում՝ նա Ռոմանոս Մելիքյանի անվան ուսումնարանի ակտիվ,

անաչառ, սկզբունքային, իստապահանջ և միաժամանակ անմիջական ու բարյացակամ դասախոս-մանկավարժներից էր, ուսուցիչների երգչախմբի ղեկավար, հավատքով և դեպի ապագա նայող դրական անձնավորություն: Երգչախմբային արվեստում մեծ ավանդ ունեցող ԻՄ ՏՄՏԻԿԻ եռանդն ու մասնագիտական մոտեցումը մինչև այսօր իր հետքն է թողել թե՛ իմ, թե՛ իր բազմաթիվ ուսանողների մասնագիտական կյանքում: Ուրախ եմ, որ ինձ բախտ վիճակվեց կիրառել իմ կարողությունները ոչ միայն Հայաստանում, այլև Եվրոպայում»:

Լուիզա Զեյթադյանը մշտապես նոր և մեծ ստեղծագործական ծրագրեր ուներ. Լուսաշխի տան երգչախմբի համար լուրջ և բարդ ծրագիր էր պատրաստում, պետք է նաև լույս տեսներ իր նոր մեթոդական ձեռնարկը, սակայն, ցավոք, 1991 թվականին՝ երկարատև հիվանդությունից հետո, անժամանակ ընդհատվում է Լուիզա Զեյթադյանի կյանքի և ստեղծագործական ուղին:

Գլուխ 2.

ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ: ԼԵՆԻՆԱԿԱՆՑԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԸ

Լենինականում աշխատելու ժամանակաշրջանը շատ հագեցած և միաժամանակ կարևոր փուլ է եղել Լուիզա Ջեյթադյանի հետագա գործունեության համար: Այդ տարիները Լուիզա Ջեյթադյանի համար եղել են մասնագիտական թրծման, հետաքրքիր իրադարձություններով լի շրջան:

Լենինականում աշխատելու տարիներին Լուիզա Ջեյթադյանը զուգահեռաբար ղեկավարում է մի շարք ինքնագործ խմբեր. Կարմիր բանակի տան երգչախումբը, Ախուրյանի շրջանի կուլտուրայի տան երգի-պարի անսամբլը, Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի երկսեռ երգչախումբը, որը 1957 թվականին Հայաստանի երիտասարդական առաջին փառատոնի դափնեկիր էր դարձել:

Այս ինքնագործ խմբերը նրա ջանքերի շնորհիվ ձեռք են բերել պրոֆեսիոնալ հատկանիշներ: Երգչախմբերը տարբեր տարիների մասնակցել են բազմաթիվ միջոցառումների և փառատոնների:

1956 թվականին ղեկավարել է Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի քառաձայն երգեցիկ խումբը, երգչախմբի հետ ելույթ է ունեցել 1956 թվականին կայացած երիտասարդական փառատոնին: 1957 թվականի մայիսի 11-12-ին մասնակցել են Լենինականի աշխատավորների առաջին երգի տոն-փառատոնին, որտեղ համերգային երգացանկում տեղ են գտել Ա. Մաթյանի «Արարատյան հովտի երգը», ուկրաինական

ժողովրդական «Հանգա» երգը, լեհական ժողովրդական «Գնաց աղջիկն անտառով» և այլ խմբերգեր:

1956-1958 թվականներին ղեկավարել է Ախուրյանի շրջավետի գործադիր կոմիտեի կուլտուրայի տան երգչախումբը, որը հաջողությամբ մասնակցել է հանրապետական առաջին երիտասարդական փառատոնին և արժանացել դիպլոմի: 1957-ին որպես խմբի ղեկավար դարձել է Հայաստանի երիտասարդության առաջին փառատոնի երգեցիկ խմբերի զծով դափնեկիր և պարզևատրվել բրոնզե մեդալով:

1957 թվականին Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության ժողովրդական ստեղծագործության ռեսպուբլիկական տան հանձնարարությամբ նշանակվելով որպես խորհրդատու՝ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 40-ամյակի կապակցությամբ անցկացվող երգի տոնի շրջանակներում Լուիզա Ջեյթադյանը կազմակերպել և նախապատրաստել է Ադինի շրջանի աշխատանքները:

Հիշարժան են նրա հանդիպումները և շփումները հանձարեղ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի, կոմպոզիտորներ Ջեյմս Գյոզալյանի, Ալեքսեյ Հեքիմյանի, խմբավար և դիրիժոր Արամ Տեր-Հովհաննիսյանի, դիրիժոր Օհան Դուրյանի և այլոց հետ:

Մեզ են հասել նրա արխիվում տեղ գտած ֆոտոները հանձարեղ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի հետ: Արամ Խաչատրյանը Լենինական է այցելել 1957 թվականին:

Գլուխ 3.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍՈՒՆ ՇՐՋԱՆԸ Ռ. ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

1958 թվականին Լուիզա Ջեյթադյանը տեղափոխվում է Երևան և աշխատանքի անցնում Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում: 1958-80 թթ. զբաղեցնում է խմբավարադիրի ժողովրդական բաժնի վարիչի պաշտոնը, միաժամանակ ղեկավարում է ուսումնարանի երգչախումբը:

Որպես առաջատար մասնագետ՝ այդ տարիներին իր գործընկերների հետ հաճախ մեկնում է գործուղումների նախկին ԽՍՀՄ և արտասահմանյան տարբեր երկրներ: 1962 թվականին որպես ուսումնարանի ներկայացուցիչ գործուղվում է Ռիգա (Լատվիա)՝ մասնակցելու դիրիժորական սեմինարների: 1969-ին եղել է Չեխոսլովակիայում, Հունգարիայում: Նույն թվականին հայ երաժիշտներից բաղկացած խմբով Տալլինում (Էստոնիա) մասնակցել է երգի տոնի 100-ամյակի տոնակատարությանը:

1964-1970 թվականներին՝ որպես Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի խմբավարական բաժնի վարիչ և մինիստրության մեթոդկաբիսետի խմբավարական սեկցիայի ղեկավար և դասատու, շարունակաբար գործուղվել է Հայաստանի տարբեր քաղաքներ՝ Լենինական, Կիրովական, Ղափան՝ մարզերում դասատուներին մեթոդական օգնություն ցուցաբերելու, խորհրդատվություններով և սեմինար-պարապոններով օժանդակելու համար:

1968 թվականի մայիսի 10-15-ը կայացած Երևան, Լենինա-

կան, Կիրովական և Ղափան քաղաքների երաժշտական ուսումնարանների սովորողների հաշվետու-ցուցադրական համերգների ժամանակ Լուիզա Ջեյթադյանի ղեկավարությամբ ելույթներ է ունեցել Ռ. Մելիքյանի անվան ուսումնարանի երգչախումբը: Կատարել են Բախի «Համերաշխ երգով կփառաբանենք», Կոմիտասի «Ախ, մարալ ջան», «Էրվում եմ» խմբերգերը, նաև հատված Ռոսինիի «Ստաբատ մատեր» ստեղծագործությունից:

Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում աշխատելու հետ համատեղ 1968 թվականին Հայկական ՄՍՀ կուլտուրայի մինիստրության հրամանով նշանակվել է Շահումյանի անվան դպրոցում որպես խմբավար:

1969 թվականի ապրիլի 29-ին Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի դահլիճում Երևանի Շահումյանի անվան երաժշտական դպրոցի աշակերտության հաշվետու համերգի մասին գրախոսական ակնարկ է գրել Հայկ. ՄՍՀ վաստակավոր արտիստ Գ. Աճեմյանը. *«Համերգն սկսվեց դպրոցի երգչախմբի ելույթով: Ծրագիրը կազմված էր դասականների, ռուս և հայ սովետական կոմպոզիտորների ստեղծագործություններից: Դիրիժոր Լ. Ջեյթադյանին հաջողվեց հասնել երգչախմբի մաքուր և հավասար հնչողության: Հիշողության մեջ կմնան պիոներական երգը Յու. Գևորգյանի «Խարույկ» օպերայից և խմբերգը Մոցարտի «Կախարդական սրինգ» օպերայից» [20]:*

1968-1974 թթ. ղեկավարել է նաև Միքայել Միրզոյանի անվան երաժշտական դպրոցի երգչախումբը: 1970-1972 թվականներին դպրոցի հաշվետու համերգների ծրագրերում կատարվել են հայ, ռուս և արևմտաեվրոպական կոմպոզիտորների խմբերգային ստեղծագործություններ:

Որպես հանրապետության առաջատար խմբավար-մաս-

նագետ՝ մի շարք անվանի երաժիշտների՝ Յուրի Հայրապետյանի, Ռոբերտ Աթայանի, Արմեն Բուդաղյանի, Ռաֆայել Մանգասարյանի հետ միասին մասնակցել է 1978 թվականին ՀՍՍՌ երաժշտական ուսումնարանների սովորողների կատարողական որակի բարձրացման և Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու 150-ամյակի նշանավորման կապակցությամբ անցկացվելիք մրցույթ-դիտման հանձնաժողովի աշխատանքներին:

Մամուլում պահպանվել են մի շարք դրվատալից արձագանքներ նրա ղեկավարմամբ Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի երգչախմբի ելույթների և գործունեության մասին:

1973 թվականին Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի երգչախումբը մասնակցել է Սովետական երիտասարդության համամիութենական փառատոնին և արժանացել գովեստի խոսքի. *«Խմբերգային արվեստը մեծ զարգացում և մեծ նվիրվածություն պահանջող արվեստ է: Այն ոչ միայն լավագույն խմբերգային ստեղծագործությունները մասսայի մեջ պրոպագանդելու միջոց է, այլև ինքը հանդիսանում է երգեցողության արվեստի մի իսկական դայրոց՝ խմբում ներգրավված յուրաքանչյուր անդամի համար: Ուշագրավ էին հատկապես Երևանի Ռ. Մելիքյանի անվան և Լենինականի ու Գիրովականի երաժշտական ուսումնարանների, Եղեգնաձորի շրջանի երգչախմբերի ելույթները: Պրոֆեսիոնալ երգչախմբերից առանձնահատուկ ուշադրության արժանացավ երգչախմբային ընկերության երգչախումբը»* [16]:

Այս փառատոնին արժանացած պարզևի մասին արձագանքներ են տեղ գտել նաև թերթի մյուս համարներում և այլ պարբերականներում.

«ՄՍՀՄ ժողովրդական արտիստ Թաթուլ Ալթունյանը համամիութենական մրցույթի մեղալ է հանձնում Հայֆիլհարմոնիայի երիտասարդ երգչուհի Մելանյա Աբովյանին, Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի երգչախմբի ղեկավար Լուիզա Ջեյթաղյանին» [17]:

«Վերջերս Երևանում անցկացվում էր երգչախմբերի ստուգատես: Պրոֆեսիոնալ կոլեկտիվների մեջ դափնեկիր դարձավ Հայկական երգչախմբային ընկերության երգչախումբը, որ ղեկավարում է արվեստի վաստակավոր գործիչ Էմմա Ծատուրյանը: Իսկ ինքնագործ խմբերի մեջ՝ Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի երգչախումբը՝ ղեկավար Լուիզա Ջեյթաղյան: Երկու կոլեկտիվներն էլ պարզևատրվեցին ոսկե մեդալներով» [18]:

Պահպանվել է այս մրցույթին երգչախմբի ներկայացրած մրցույթային ծրագիրը, որում տեղ են գտել Եկմայանի «Ով, հայոց աշխարհ», Կոմիտասի «Յար ջան, արի» և «Էրվում եմ», Բասներ-Ալեքսանդրովի «Ինչից է սկսվում հայրենիքը» (С чего начинается родина), Շչերբալինի «Ժայռը», Ա. Բարաջանյանի «Ազգ փառապանծ», հատվածներ Ջ.Գերշվինի «Պորգի և Բես» օպերայից, Quitolis Մոցարտի G-dur մեսսայից և այլ ստեղծագործություններ: Ինչպես նկատում ենք, չնայած ինքնագործ որակավորմանը, երգչախմբի երգացանկը բավական ծավալուն և պրոֆեսիոնալ է:

«Ինը կոլեկտիվներ հասան մրցույթի որոշիչ, եզրափակիչ՝ երրորդ փուլին: Նրանք բոլորը ելույթ ունեցան հետաքրքիր, լայնածավալ ծրագրով. հայ ժողովրդական երգեր և մշակումներ, ռուս և սովետական կոմպոզիտորների ռոմանսներ և երգեր, արտասահմանյան հայ կոմպոզիտորների ստեղծագործություն-

ներ: Ձգացվում էր, որ մրցույթի մասնակիցները լավ աշխատել են, մեծ պատասխանատվությամբ են մոտեցել ծրագրի պատրաստմանը:

Հոյակապ էլույթ ունեցավ Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի երկսեռ երգչախումբը՝ ներկայացնելով հարուստ և բազմազան ծրագիր: Այս ներդաշնակ, գրագետ անսամբլը առանձնանում է նուրբ, փափուկ հնչողությամբ, ինտոնացիոն մաքրությամբ, կատարման արտահայտչականությամբ: Նրանք և նվաճեցին մրցույթի ոսկին: Կոլեկտիվի գեղարվեստական ղեկավարն է Լուիզա Զեյթադյանը» [19]:

Հաջորդող տարիներին մեծ թվով արձագանքներ են տեղ գտել նաև այլ թերթերում. 1989թ. «Երեկոյան Երևան» թերթի դեկտեմբերի 9-ի համարում՝ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կայացած՝ երկրաշարժի գոհերի տարելիցին նվիրված համերգի մասին, որին մասնակցում էին Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության երգչախումբը և Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի սաները՝ Լ.Զեյթադյանի ղեկավարությամբ: Նույն թերթի՝ 1990-ի փետրվարի 13-ի համարում է տպագրվել ակնարկ՝ նվիրված Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի գործունեությանը, սաներին և մանկավարժներին:

Լուիզա Զեյթադյանի անձնական արխիվում գտնվեց նաև նրա շնորհակալական խոսքը իր 60-ամյա հոբելյանի առիթով կազմակերպված միջոցառմանը: Ստորև այն ներկայացնում ենք ամբողջությամբ.

«Հարգելի՛ բարեկամներ, կոլեգանե՛ր, նախկի՛ն շրջանավարտներ, ուսանողնե՛ր, թո՛ւյլ տվեք իմ շնորհակալությունը հայտնել Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի

դիրեկցիային, խմբավարական բաժնին, ամբողջ կոլեկտիվին, ուսանողներին:

Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում երգչախմբային ընկերության նախագահությանը և ինձ շնորհավորող բոլոր ընկերներին:

Այստեղ գովեստի և ջերմ խոսքեր ասվեցին իմ հասցեին, խոսք չեմ գտնում իմ երախտագիտությունը հայտնելու:

Շուրջ 35 տարի է, որ դասավանդում եմ երաժշտական ուսումնարանում և միշտ ձգտել եմ ուժերիս ներածին չափ իմ սաներին սեր ներշնչել դեպի ընտրած մասնագիտությունը, տալ կայուն գիտելիքներ, որպեսզի կյանքում լինեն համարձակ, վստահ, կարողանան աշխատել իրենց ընտրած մասնագիտությամբ:

Միրով եմ կատարել և կատարում եմ ինձ վրա դրված հասարակական բոլոր պարտականությունները:

Անշահախնդիր և մեծ բավականությամբ աշխատել եմ իմ երգչախմբի հետ, իմ եմ ասում, որովհետև շուրջ 20 տարի է, որ ուսուցչական երգչախմբի հետ ունեցել ենք դառը և լավ օրեր, հաղթահարել ենք շատ դժվարություններ: Ինքնագործունեության հետ առնչվող մասնագետներին այդ վիճակը պետք է, որ քաջ հայտնի լինի: Ցավում եմ, որ կետարյա պատմություն ունեցող խումբը այժմ դադարեցնելու է իր գործունեությունը:

Պետք է ասեմ, որ իմ կյանքի լավագույն ժամանակներից են եղել նաև Պետական ակադեմիական կապելլայում աշխատելու տարիները, որտեղ բավականին փորձ եմ ձեռք բերել և շատ բան սովորել...

Չեմ նախանձում այն մարդկանց, որոնք իրենց գործը-մասնագիտությունը չեն սիրում, աշխատում են միայն աշխատելու

համար: Այդ հարցում ես ինձ երջանիկ եմ համարում: Ես սիրում եմ մանկավարժությունը, ապրում եմ իմ աշխատանքով, այն ինձ համար հոգևոր սնունդ է: Ուրախանում եմ իմ սաների հաջողություններով, տխրում նրանց անհաջողությամբ:

Ընկերներ, չնայած իմ պատկառելի տարիքին՝ ես դեռ աշխատելու մեծ ցանկություն և եռանդ ունեմ: Իմ ուժերը չեմ խնայի՝ մեր հայրենիքին տալու հասարակությանը պիտանի, ժամանակի ոգով ապրող, որակյալ մասնագետներ:

Ես ուզում եմ շնորհակալական խոսք ուղղել իմ նախկին սաներին, որոնք մինչև օրս հիշում են և կապ պահպանում ինձ հետ:

Կրկին թո՛ւյլ տվեք իմ շնորհակալությունը հայտնել այս երեկոն կազմակերպողներին և բոլոր մասնակիցներին» [11]:

Այսպիսի անկեղծ և անմիջական խոսքերը հաստատում են այն, որ Լուիզա Ջեյթադյանն իր ողջ մարդկային և մասնագիտական կյանքում դավանում էր բարոյական ամենաբարձր արժեքները՝ մինչև կյանքի վերջը հավատարիմ մնալով իր սկզբունքներին:

ԼՈՒԻԶԱ ՋԵՅԹԱՂՅԱՆԻ ՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Որպես խորաթափանց մանկավարժ՝ Լուիզա Ջեյթադյանը քաջ գիտակցում էր մեթոդական աշխատանքների դերը ապագա սերունդների մասնագիտական դաստիարակության հարցում և իր ներդրումն ունեցավ նաև այս կարևոր գործում:

1963-1986թթ. նա Հայկական ՄՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության գիտամեթոդական կարիներտի խմբավարական սեկցիայի վարիչն էր:

1974 թվականին ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության գիտամեթոդական կարիներտի աջակցությամբ նրա և Ջ. Ղափլանյանի համահեղինակությամբ լույս ընծայվեց «Խմբավարության դասավանդման մեթոդական հանձնարարականներ» ժողովածուն, որտեղ ընդգրկված են մինչ այդ անտիպ կամ սակավաթիվ օրինակներ ունեցող հայ կոմպոզիտորների խմբերգեր: Խմբերգերը տեղադրված են խմբավարություն մասնագիտության ուսումնական ծրագրին համապատասխան հերթականությամբ: Ժողովածուում ընդգրկված են Կոմիտասի, Եկմալյանի, Կարա-Մուրզայի, Գ. Սյունու, Ռ. Մելիքյանի, Դ. Ղազարյանի, Գ. Հախինյանի, Հ. Ստեփանյանի, Ա.Շիշյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Ջ. Գյոզալյանի ակապելլա (առանց նվագակցության) խմբերգերը:

1987 թվականին Դ.Գ.Ղազարյանի համահեղինակությամբ հրատարակվել է «Խմբավարության դասավանդման ձեռնարկը (առանց նվագակցության)» երաժշտական ուսումնարանների սովորողների համար: Ձեռնարկում տեղ են գտել տարբեր ժանրերի և ոճերի ստեղծագործություններ՝ ժողովրդական երգերի

մշակումներ, հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների խմբերգեր: Ձեռնարկը բաղկացած է երկու մասից. առաջին մասում ընդգրկված են խմբերգեր միասեռ և երկսեռ երգչախմբերի համար, օգտագործված են ինչպես պարզ, այնպես էլ բարդ չափեր: Խմբերգերն ունեն հոմոֆոն-հարմոնիկ կառուցվածք, կան խմբերգեր՝ գրված պոլիֆոնիկ ոճով: Երկրորդ մասում ընդգրկված են բարդ և փոփոխական չափերով խմբերգեր հայ կոմպոզիտորների կանտատներից և օպերաներից, ինչպես նաև մասսայական երգեր:

1989 թվականին կրկին Դ.Գ.Ղազարյանի համահեղինակությամբ հրատարակվել է նաև «Խմբավարության դասավանդման ձեռնարկ (դաշնամուրի նվագակցությամբ)» ժողովածուն: Այն նախատեսված է երաժշտական ուսումնարանների 1-4-րդ կուրսերի սովորողների համար: Ժողովածուում ընդգրկված են Տ. Չուխաճյանի, Ա.Բաբաջանյանի, Ստ. Ջրբաշյանի, Է. Արիստակեսյանի, Տ. Մանսուրյանի, Գ. Արմենյանի, Ռ. Պետրոսյանի, Է. Հովհաննիսյանի, Ա. Մաթյանի, Մ. Վարդազարյանի, Ա. Հարությունյանի խմբերգային ստեղծագործություններից հատվածներ և առանձին խմբերգեր:

Վերջին՝ չորրորդ «Խմբերգային պարտիտուրի ընթերցման դասընթաց» ձեռնարկը լույս է տեսել հետմահու՝ 1996 թվականին՝ համահեղինակությամբ Մ. Եղիզարյանի և Դ. Ղազարյանի: Նախաբանում համառոտ շարադրված են համաշխարհային խմբերգային պարտիտուրի ստեղծման, զարգացման, ինչպես նաև արդի վիճակի մասին տեղեկություններ: Ձեռնարկը բաղկացած է մի քանի գլուխներից՝ իրենց ենթագլուխներով. հասկացողություն երգչախմբի մասին, երգչախմբային պարտիտուրի առանձնահատկությունների, տեսակների, գրառման, կատարման եղա-

նակների, ինչպես նաև խմբերգում գրական տեքստի դերի մասին: Տեսական նյութի շարադրմանը զուգահեռ բերված են նույնիսկ որոշակի օրինակներ: Ժողովածուն ընդգրկում է հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների օրիգինալ ստեղծագործություններ և ժողովրդական երգերի մշակումներ՝ մանկական, միասեռ կամ երկսեռ երգչախմբերի համար ակապելլա (առանց նվագակցության) և դաշնամուրի նվագակցությամբ:

Գլուխ 4.

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱՊԵԼԼԱՅՈՒՄ

1970-1977 թվականներին Լուիզա Ջեյթադյանն աշխատել է Հայաստանի պետական ակադեմիական կապելլայում՝ որպես խմբավար: Հանդիսացել է նաև կապելլայի կուսակցական կազմակերպության երկրորդ քարտուղար, վերահսկող խմբի ղեկավար:

Լուիզա Ջեյթադյանի անձնական արխիվում տեղ են գտել բազմաթիվ լուսանկարներ, համերգային հրավիրատոմսեր և ծրագրեր, որոնք մեզ օգնում են պատկերացում կազմելու այդ հագեցած և երաժշտական արվեստով լի ժամանակաշրջանի մասին:

Այս ժամանակաշրջանը կապելլայի գործունեության մեջ նշանավորվել է հատկապես մի քանի կարևորագույն իրադարձություններով:

1969 թվականին կապելլային շնորհվել էր «Ակադեմիական» բարձր կոչումը, որի հանձնման հանդիսավոր արարողությունը տեղի էր ունեցել 1970-ին Հայհամերգի փոքր դահլիճում: Այդ ժամանակ ԽՍՀՄ կուլտուրայի մինիստրության ներկայացուցիչն ընդգծել էր, թե Խորհրդային Միությունում որքան քիչ են այդ կոչումը կրող կատարողական կոլեկտիվները, և ինչպիսի խստագույն ընտրությամբ է այն շնորհվում [1, էջ 62]:

1971 թվականին շարունակվում էր երգչախմբի հաղթարշավը Խորհրդային Միության քաղաքներում. նրանք նվաճում են նորանոր բեմահարթակներ, գերում բազմահազար ունկնդիրների:

Խորհրդային Միության գրեթե բոլոր անկյուններում կայացած համերգներին զուգահեռ՝ 70-ականները նշանավորվում են կապելլայի առաջին արտասահմանյան հյուրախաղերով, երբ 1974-ին այն հանդես է գալիս Լիբանանում և Ֆրանսիայում՝ Փարիզ և Մարսել քաղաքներում [1, էջ 67]:

Համերգների ընթացքում հնչում էին համաշխարհային երաժշտական արվեստի ամենանշանավոր գլուխգործոցները՝ Բեթհովենի Իններորդ սիմֆոնիան, Բեովոլդի «Requiem»-ը՝ հունգարական սիմֆոնիկ նվագախմբի, Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի, Յուրուվի անվան ռուսական և Բուդապեշտի երգչախմբերի կատարմամբ, Ռոսինիի «Stabat Mater»-ը: Համերգներին մշտապես հնչում էին Կոմիտասի նշանավոր «Գութաներգ», «Կալի երգ», «Հովն անուշ» և այլ խմբերգեր: Ի դեմս Հայաստանի ակադեմիական կապելլայի՝ արտասահմանյան մամուլը ամենաշոսայլ և հիացական արձագանքն էր տալիս հայ կատարողական երգարվեստին:

«Հայաստանի երգչախումբը արդի դարաշրջանի ամենանշանակալից երևույթներից է» («Tierse soir»):

«Արտաբերված ձայները հմայում են նրբությամբ և ճաշակով: Հնչյունները մերթ զալարվում են, մերթ թռչում, վանկերը տեղ-տեղ չափազանց խիտ են ու զուսպ, հետո նորից հոսում են մի այնպիսի էլաստիկությամբ ու ճկունությամբ, որի մասին մենք Եվրոպայում պատկերացում չունենք» («Figaro»), [1, էջ 70]:

Հայաստանյան համերգային սեզոններին կապելլան հանդես էր գալիս ամենաբազմազան երկացանկով:

«Անկեղծ ասած, հյուրախաղեր ասելով,-խոստովանում է Մաեստրոն,-նկատի ունեմ մեր երկրից դուրս կայացող համերգները, իսկ երկրի մի ծայրից մյուսը ձգվող երթուղիները սովոր-

րական առօրյա են: Իրականում տարվա համար նախատեսվող հարյուր համերգներից միայն քառասունն են կայանում Հայաստանում: Ստացվում է, ասես մենք տուն ենք գալիս հյուրախաղերի: Հուսով եմ, տանը չենք վշտացնում դրանով, չէ՞ որ ամենուրեք էլույթ ենք ունենում Հայաստանի անունից, և մեր անունն էլ սկսվում է Հայաստան բառով» [1, էջ 69]:

1975 թվականին Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը ստանում է Հայաստանի վաստակավոր կոլեկտիվի կոչում: Նույն թվականին Հովհաննես Չեքիջյանն ընտրվում է ՀԽՍՀ Իններորդ գումարման Գերագույն խորհրդի դեպուտատ, Կապելլան ստանձնում է Ղափան-Քաջարանի երաժշտական շեֆությունը [1, էջ 74]:

1976թ. գարնանային հյուրախաղերը սկսվում են Մոսկվայում, ապա շարունակվում Քիշնևում, Տիրասպոլում, Կիևում, Խարկովում, Դնեպրոպետրովսկում: Նույն թվականի հուլիսին Ռիգայի Դոմայի տաճարում հնչում է Մոցարտի «Requiem»-ը՝ ազդարարելով 22 համերգից բաղկացած համերգաշրջանի մեկնարկը: Մերձբալթյան հյուրախաղերը ևս արժանանում են ունկնդրի և մամուլի ամենաբարձր գնահատականներին: Նույն թվականի աշնանը կապելլան հյուրընկալվում է Բաքվում:

1976-ին տեղի է ունենում Արամ Տեր-Հովհաննիսյանի ծննդյան 90-ամյակին նվիրված համերգը, որի ժամանակ Կապելլան Հայաստանի պետական երգչախմբի մեծ նվիրյալին է ձոնում Կոմիտասի, Եկմալյանի, Ռոսինիի, Բախի ստեղծագործությունների անգուգական կատարումները:

1977-ը մեկնարկում է Լենինգրադում և նշանավորվում միանգամից մի քանի ստեղծագործությունների պրեմիերաներով: Հունվարի 10-ին և 11-ին Լենինգրադի ֆիլհարմոնիայի Շոստա-

կովիչի անվան մեծ համերգասրահում հնչում են Այտընյանի «Պատարագը», Հովհաննես Չեքիջյանի «Գարնանային անուրջները» և Բեռլիոզի «Te Deum»-ը: Հնչում են նաև Մոցարտի «Requiem»-ը և Արամ Խաչատրյանի «Ձոն ցնծությանը»:

Լենինգրադի ֆիլհարմոնիայի գեղարվեստական ղեկավար, ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Օ. Սարկիսովը գրում է.

«.....Հայկական կապելլան ողջ կոլեկտիվի ստեղծագործական բացառիկ որակների շնորհիվ իրավամբ նվաճել է համաժողովրդական ճանաչում, հանդիսականների սերը և միջազգային հռչակ: Կապելլայի աշխատանքում ամենից առաջ պետք է առանձնացնել կոլեկտիվի բարձր անսամբլային պրոֆեսիոնալ հատկանիշները, յուրահատուկ, միայն իրեն բնորոշ վոկալ հնչողությունը, որն անտարբեր չի թողնում ունկնդիրներից ոչ մեկին: Այս կապելլան, անտարակույս, կարելի է դասել մեր ժամանակի ամենանշանակալի երևույթների շարքում» [2, էջ 74]:

Դստեր՝ Նունեի հիշողություններում, քանի որ ինքն ուղեկցել է մորը, վառ են մնացել հենց այս՝ 1976-77 թվականների հյուրախաղերի մասին հիշողությունները, կայացած ԽՍՀՄ մի շարք քաղաքներում՝ Մտավրուպոլ, Արմավիր, Սոչի, Ռիգա և այլն:

Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի բարձր գնահատանքը Լուիզա Ջեյթադյանին ակնառու է իր նամակ-խնդրագրից, որով նա 1977 թվականի մայիսի 10-ին խնդրանքով դիմել է Հայկական ՍՍՀ կուլտուրայի նախարար Պարսամյանին: Նամակում մասնավորապես ասվում է. «Լուիզա Ջեյթադյանը 1970 թվականի հուլիսից մինչև 1977 թվականի ապրիլն աշխատել է պետական սկադեմիական կապելլայում: Այս ժամանակահատվածում նա դրսևորել է իրեն որպես մեծ փորձ ունեցող մասնագետ և իր անխոնջ աշխատանքով նպաստել է սկադեմիական կապելլայի

լայնածավալ երկացանկի և նրա կատարողական վարպետության պատրաստմանը: Ներկա դրությամբ ընկ. Ջեյթադյանն աշխատում է Ռոմանոս Մելիքյանի անվան ուսումնարանում: Նրա մեծ խմբավարական պրակտիկան հաշվի առնելով և այն, որ նա նաև շատ անհրաժեշտ է մեր կոլեկտիվին, խնդրում եմ բացառության կարգով թույլատրել նրան ձևակերպել խմբավարի պաշտոնում համատեղության կարգով: Պետկապելլայի դիրեկտոր՝ Հովհաննես Չեքիջյան» [7]:

Դրվատանքի խոսքեր են հնչել Լ. Ջեյթադյանի մասին 1972 թվականին «Կոմունիստ» թերթում Ս. Թաշյանի անդրադարձում, որ նվիրված էր երիտասարդ խմբավար Խորեն Մելխանեջյանի առաջին ելույթին Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում.

«Հաճելի է նշել, որ կապելլայի խմբավար Լ. Ջեյթադյանը, որ ելույթ ունեցավ համերգի առաջին քաժնում երկու համարով, ցուցադրել է լավ ճաշակ և ամրություն դանդաղ կանտիլենայի կատարման ժամանակ: Հատկապես ցայտուն էր դա հնչում Կոզակի մշակմամբ «Думы мои» ուկրաինական ժողովրդական երգում» [8]:

Մեկ այլ՝ «Երեկոյան Երևան» թերթի՝ 1972 թվականի փետրվարի 16-ի համարում Խորեն Մելխանեջյանի ղեկավարությամբ կայացած Գունոյի «Մահ և կյանք» օրատորիայից յոթ հատվածների կատարման մասին հեղինակը, մանրամասն անդրադառնալով երեկոյին և կապելլայի կատարողական հասկանիչներին, ընդգծում է.

«.....Համերգից հետո բոլորը հոտնկայս ծափահարում էին երգչախմբին, դիրիժորներ Խ. Մելխանեջյանին, Լ. Ջեյթադյանին և այդ օրը հանդիսատեսի դերում գտնվող մաեստրո Հ. Չեքիջյանին» [9]:

1975 թվականին ԽՍՀՄ պետական մրցանակին արժանանալու կապակցությամբ «Պրավդա» թերթում ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Կոզլովսկու անդրադարձում կարդում ենք.

«Կոլեկտիվում, որը ղեկավարում է Հ. Չեքիջյանը, երգիչները մոտավորապես ութսունն են: Իսկ համերգներին լսում ես արտահայտիչ, երգչախմբային հզոր ձայն, որն ունի միասնական շնչատություն՝ հստակ և ինտոնացիոն առումով հավասար: Իրենց յուրօրինակ օժտվածությամբ աչքի են ընկնում կապելլայի մենակատարները՝ Հ. Ջեթյանը, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և քալետի հայկական պետական ակադեմիական թատրոնի արտիստներ Օ. Գաբայանը, Վ. Միրաքյանը, Բ. Գրեկովը և ուրիշներ: Նրանք բոլորը երգչախմբի ղեկավար Հովհաննես Չեքիջյանի և նրա օգնականներ Խ. Մելխանեջյանի, Լ. Ջեյթադյանի, Կ. Թովիչյանի տաղանդով և ոգեշնչմամբ միավորված են մի ստեղծագործական կոլեկտիվում, որն ունի իր գեղարվեստական ծրագիրը, իր ոճը» [10]:

Անկասկած, Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը մշտապես հանդես է եկել բարձրաճաշակ համերգային ծրագրերով աշխարհի գրեթե բոլոր անկյուններում՝ արժանանալով ամենաբարձր պարգևների և գնահատանքի: Բազմաթիվ համերգներում կապելլայի հետ հանդես են եկել այնպիսի մեծության արտիստներ, ինչպիսիք են՝ Լուսինե Չաքարյանը, Վահան Միրաքյանը, Օլգա Գաբայանը, Բորիս Գրեկովը, Ալբերտ Խաչատրյանը, Արշավիր Կարապետյանը, Էմմա Սարգսյանը, Ալլա Ղազարյանը, Նինա Հակոբյանը, Պողոս Հովհաննիսյանը և այլք:

Ահա այսպիսի շոնդալից հաջողությունների մեջ իրապես նշանակալի էին Լուիզա Ջեյթադյանի անմիջական մասնակցու-

թյունը և մասնագիտական ներդրումը: Այսօրինակ երկացանկի կատարումը մեծագույն պրոֆեսիոնալիզմ և նվիրում է պահանջում ինչպես կուլեկտիվի գլխավոր դիրիժորից, այնպես էլ նրա կողքին իրենց նշանակալի դերն ունեցող խմբավարներից:

Գլուխ 5.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ԼՈՒՍՍՇԽԻ ՏԱՆԸ

Խորհրդային Հայաստանի կազմավորումից հետո ստեղծվեցին անհրաժեշտ նախադրյալներ՝ հասարակության լայն շերտերի սոցիալ-մշակութային, հոգևոր, կրթական, դաստիարակչական բազմաթիվ հարցերը կազմակերպելու և զարգացնելու համար: Այդ նպատակով Երևանում բացվեցին կուլտուրայի տներ (այժմ՝ մշակույթի) և արհմիություններին կից բանվորական ակումբներ: 1922 թվականին ստեղծվեց Լուսաշխի տունը և իր տեսակի մեջ առաջինն էր: Ակումբ հաճախող լուսավորության աշխատողներից շատերը մեծ եռանդի տեր և ժողովրդին ծառայելու պատրաստակամություն ունեցող մարդիկ էին և կարողացան արդյունավետ կազմակերպել ակումբի աշխատանքը: Լուսաշխի տան հետ կապված էր քաղաքի ողջ մտավորականությունը: Տարբեր բնագավառների ամենաառաջատար մասնագետները մշտապես հանդես էին գալիս դասախոսություններով ու նախաձեռնություններով և պատիվ էին համարում հանդես գալ ուսուցիչների և մտավորականների առջև: Այս յուրօրինակ մշակույթի տունը դառնում է տարբեր բնագավառներում գործունեություն ծավալող լուսաշխատողների և նրանց ընտանիքների սիրելի վայրը: Գործում էին ամենատարբեր ուղղվածության խմբակներ՝ երաժշտական, թատերական, կար ու ձևի, նկարչության, գրականության, սպորտի և այլն:

Երգչախումբը հիմնվեց 1926 թվականի աշնանը, նրա առաջին խմբավարն էր Ստեփան Դեմուրյանը: Տարբեր ժամա-

նակներում նրա խմբավարներն էին Կարո Զաքարյանը, Թաթուլ Ալթունյանը, Դանիել Ղազարյանը, Մարտին Մազմանյանը, Վահան Ումր-Շատը, Հովհաննես Վերանյանը, Մեսրոպ Մեսրոպյանը:

1943 թվականին կոմպոզիտոր և մանկավարժ Ազատ Մանուկյանի ջանքերով Լուսաշխի տանը կազմակերպվում է նաև մանկական երգչախումբ, որի կազմում հարյուրավոր պատանիներ և աղջիկներ ստացան իրենց նախնական երաժշտական կրթությունը: Ամենատարբեր ձևաչափերով կայանում էին հանդիպումներ հայ անվանի մտավորականների՝ Ավետիք Իսահակյանի, Հովհաննես Շիրազի, Մարտիրոս Սարյանի, Վիկտոր Համբարձումյանի, Վահրամ Փափազյանի, Հրաչյա Ներսիսյանի, Գոհար Գասպարյանի, Երվանդ Քոչարի և այլոց հետ:

Երաժշտական աշխարհի ներկայացուցիչներից Լուսաշխի տուն էին այցելում Ռոմանոս Մելիքյանը, Սպիրիդոն Մելիքյանը, Դանիել Ղազարյանը, Շարա Տայանը, Հայկանուշ Դանիելյանը և ուրիշներ: Լուսաշխի տանը ուսուցչական երգչախումբ ստեղծելու գործի մեջ իրենց ջանքերը ներդրեցին Վ. Քեչիգեզյանը, Նշան Մակինցը, Խաչիկ Մանոյանը:

Երգչախումբը միշտ ձգտել է հասնել հնարավորինս պրոֆեսիոնալ մակարդակի: Իր գործունեության տարբեր տարիների այն միշտ արժանացել է ունկնդիրների բարձր գնահատականին՝ կատարողական բարձր արվեստի շնորհիվ: 1963 թվականին ստացել է «ժողովրդական երգչախումբի» կոչում և իր ուսերին առել հասարակական աշխատանքի մեծ պարտավորություններ: Այն նաև ստանձնել է Կիրովականի «Հայկական Արտեկ» պիոներական ճամբարի շեֆությունը (այն ապահովում էր երեխաների երաժշտական դաստիարակությունը) և պարբերաբար ելույթներ

ունեցել պատանի ունկնդրի առջև: Բազմաթիվ են երգչախումբի՝ ստուգատեսներին և փառատոներին ամենաբարձր մակարդակով ներկայանալու առիթներով ստացած պատվոգրերն ու դիպլոմները, պարգևներն ու հուշադրոշները:

1967-ից մինչև 1982 թվականները երգչախումբը ղեկավարել է Լուիզա Զեյթադյանը: Պահպանելով երգչախումբում ձևավորված լավագույն ավանդույթները՝ նա հարստացրել է երգչախումբի երկացանկը նոր ստեղծագործություններով, ներառել դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ:

1969 թվականին երգչախումբը հյուրախաղերով հանդես է եկել Լենինգրադում: Նույն թվականին երգչախումբի 40-ամյակի կապակցությամբ «Կոմունիստ» թերթում տպագրվել է հոդված ուսուցչի տան երգչախումբի լենինգրադյան համերգի մասին, որտեղ հեղինակ Յու. Առաքելյանը գրում է. *«Կարծես դա երեկ էր: Քառասուն տարիներն աննկատ անցան: Քառասուն տարի՝ քառասուն տարբեր ծրագրեր: Վերջինի հետ վերջերս ծանոթացրին լենինգրադցիներին: Ուսուցչական երգչախումբը մեկնեց լենինյան վայրերով շրջագայության և այնտեղ ծավալեց ակտիվ համերգային գործունեություն: Հազարավոր լենինգրադցիներ ծափահարեցին երևանյան ուսուցիչների արվեստին: Հուզիչ էր նաև կոլեգաների հետ հանդիպումը: Լենինգրադի լուսավորության աշխատողների մշակութային պալատի ղեկավարության ողջունի հղման մեջ նշվում է. «Ելույթ ունենալով լենինգրադյան ուսուցիչների առջև՝ պատճառեցին բազում հաճելի պահեր»...*

«Այդ հիշարժան երեկոյի ընթացքում հայ երգը ջերմ արձագանք գտավ լենինգրադցիների մոտ»,-հիշատակում է երգչախումբի գեղարվեստական ղեկավար Լ. Զեյթադյանը:

«Ուղևորությունից մենք վերադարձանք ողեշնչված. միանգամից վերսկսեցինք փորձերը»:

Հաջորդիվ հեղինակը պատմում է երգչախմբի հիմնադրման և գործունեության մասին՝ նշելով, որ ուսուցչական երգչախմբում երգում են վաթսուն հոգի: Նրանք այստեղ են գալիս դպրոցում լարված աշխատանքից հետո, շաբաթը երկու անգամ: Ամիսը մեկ անգամ էլ երգչախումբը ավանդաբար հավաքվում է մեկ բաժակ սուրճի շուրջ, որպեսզի ոչ միայն հանգստանան, այլև լավ ճանաչեն միմյանց:

Մի շաբթ անդամներ երգում են երգչախմբում դեռևս 1938 թվականից: Վետերանները հիշում են նաև իրենց առաջին խմբավար Ստեփան Դեմուրյանին: Նրանից հետո երգչախումբը ղեկավարել են Դ. Ղազարյանը, Թ. Ալթունյանը, Մ. Մազմանյանը, Ումր-Շատը, Կ. Կարապետյանը, Հ. Վերանյանը, Մ. Մեսրոպյանը:

Երգչախմբում կար բարի ավանդույթ: Վետերաններին հանդիսավոր ճանապարհում էին թոշակի: Երգչախմբում գործում էր նաև «բարի ծառայությունների բյուրո»՝ ուսուցչուհի Անյա Պետրոսյանի ղեկավարությամբ: Այն միաժամանակ ծառայում էր որպես ադմինիստրատիվ-գեղարվեստական շտաբ, որտեղ լուծվում են երգացանկի, փորձերի, համերգների հարցերը: Ընթացիկ տարում նախատեսվում էին երգչախմբի արտագնա հաշվետու ելույթները Լենինականում և Կիրովականում:

Քառասուն տարվա ընթացքում ինքնագործ արտիստները շրջագայել են ամբողջ հանրապետությունում: Մեկնել են համերգների Վրաստան, Էստոնիա, Լատվիա: Ելույթներ են ունեցել Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում: Նրանց ծափահարել են Բուլղարիայում, Ռումինիայում: Պատահական չէ, որ Երևանի

ուսուցչի տան երգչախումբը հանրապետական ստուգատեսների և փառատոների դափնեկիր էր:

Քառասուն տարիվա ընթացքում հանրապետության հնագույն երգչախումբն ունեցել էր հարյուրավոր համերգներ: Առջևում էին նոր ունկնդրի հետ հուզումնալից հանդիպումները: Այսպես է եզրափակել իր ակնարկը հոդվածագիրը [15]:

1969 թվականին կայացել է երգչախմբի ստեղծման 40-ամյակի հոբելյանական համերգը: Հանրապետության վաստակավոր արտիստ Վ. Մաթևոսյանն այս իրադարձությանն արձագանքել է հոդվածով.

«Համերգային փոքր դահլիճի բեմահարթակը զբաղեցրել էր Երևանի ուսուցչի տան ժողովրդական երգչախումբը, որն այդ օրը նշում էր իր հիմնադրման 40 տարին:

Լեփ-լեցուն դահլիճը սիրով էր ունկնդրում հոբելյանական ծրագրի յուրաքանչյուր համար:

.....Մանկավարժների երաժշտական այս հնագույն կոլեկտիվն անցել է ստեղծագործական հետաքրքիր ու դժվարին ուղի: Նրա բազմահարուստ տարեգրությունը սկսվում է 1929 թվականից, երբ հայ անվանի երգահան, մանկավարժ ու խմբավար Ստեփան Դեմուրյանը ձեռնամուխ եղավ երգչախմբի կազմակերպման աշխատանքներին: Նրան հաջորդեց հայ երգի ու ռոմանսի ականավոր ներկայացուցիչ Ռոմանոս Մելիքյանը, որը երգչախմբի կատարողական արվեստը բարձրացրեց մի նոր աստիճանի: Նրան փոխարինեց իր աշակերտը՝ Թաթուլ Ալթունյանը: Ապա միմյանց հաջորդեցին Կարո Զաքարյանը, Մարտին Մազմանյանը, Դանիել Ղազարյանը, Ումր-Շատը, Կարո Կարապետյանը և ուրիշներ: Այժմ երգչախմբի ղեկավարն է շնորհալի խմբավար Լուիզա Զեյթադյանը:

Հանդիսանալով հանրապետության ինքնագործ արվեստի ավագագույն և լավագույն կոլեկտիվներից մեկը՝ երգչախումբն իր գործունեությունը ծավալել է ոչ միայն հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս՝ պրոպագանդելով հայ, ռուս դասական, ինչպես նաև արևմտաեվրոպական ու ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները:

Համերգային շրջագայություններն ընդգրկել են Մոսկվան, Լենինգրադը, Ռիգան, Տալլինը, Թբիլիսին, Բաքուն և այլ քաղաքներ: Բացի այդ, երգչախումբը մեծ հաջողությամբ ելույթներ է ունեցել Բուլղարիայի և Ռումինիայի հայկական գաղութներում, որտեղ հնչեցրել է հայկական խմբերգային երաժշտության հատընտիր գործերը, մասնավորապես հանճարեղ Կոմիտասի շողուն գոհարները:

Կոլեկտիվն իր արգասավոր գործունեության համար բազմիցս պարգևատրվել է պատվոգրերով և դիպլոմներով, իսկ 1958 թվականին արժանացել է «Ժողովրդական»-ի պատվավոր կոչման:

Ներկայումս երգչախումբը սիրով ու եռանդով է պատրաստվում Վ.Բ. Լենինի, Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 100-ամյակների ու մեր հանրապետության հիմնադրման 50-ամյա պատմական հորեյաններին:

...Գրիգոր Սյունու երկու երգերը՝ «Այ, յայի»-ն և «Մարերը հովելա» կատարվեցին ոճի պահպանմամբ և համոզիչ անմիջականությամբ: Հուզառատ հնչեց Եկմայանի «Համենայնի»-ն, իսկ Կոմիտասի «Իմ չինարի յար»-ը ցուցադրվեց նրբագեղ և կենսուրախ երանգավորմամբ: Էսթետիկական մեծ հաճույք պատճառեց Տիգրանյանի «Անուշ» օպերայի աղջիկների խմբերգը:

Ձերմորեն ընդունվեց երգչախմբի տղամարդկանց վոկալ անսամբլը (յոթնյակը):

Ունկնդիրներին մեծ հաճույք պատճառեցին երգչախմբի մենակատարներ Հասմիկ Էքսուզյանը, Հենրիկ Միհրանյանը և Վիկտոր Պավլենկոն:

Հատկապես պետք է ընդգծել Լուիզա Ջեյթադյանի հմուտ և նրբաճաշակ աշխատանքը: Հանձին նրա՝ երգչախումբը գտել է իր կոչմանը համապատասխան դեկավարին: Անհրաժեշտ է երգչախումբը համալրել երիտասարդ կադրերով:

Երգչախմբին նվագակցում էր դաշնակահարուհի Բ. Մաթնոսյանը, իսկ վոկալ անսամբլին՝ դաշնակահար Հ. Փարաջանյանը:

Համերգից առաջ տեղի ունեցավ հանդիսավոր մաս: Հոբելյանական երեկոն բացեց արվեստի վաստակավոր գործիչ Էմմա Ծատուրյանը: Այնուհետև երգչախմբի ստեղծագործական գործունեության մասին ընդարձակ ու բովանդակալից զեկուցում կարդաց արվեստագիտության թեկնածու Մարգարիտ Բրուտյանը:

Երեկոն անցավ ջերմ ու սրտառույց մթնոլորտում: Այն կազմակերպել էին լուսավորության աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեն և Հայաստանի երգչախմբային ընկերությունը» [14]:

Համերգային ծրագրում այդ երեկո հնչել են հայ կոմպոզիտորների՝ Կոմիտասի, Սյունու, Մ. Եկմայանի, Է. Հովհաննիսյանի, Ա. Տիգրանյանի, Գ. Արմենյանի, ինչպես նաև ռուս և արևմտաեվրոպական կոմպոզիտորների հանրահայտ խմբերգեր: Մեներգել են Հ. Էքսուզյանը, Գ. Միհրանյանը, Վ. Պավլենկոն:

1976 թվականին ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության և

Հայաստանի երգչախմբային ընկերության կողմից անցկացված երգչախմբերի հանրապետական մրցույթում երգչախումբը արժանացել է երրորդ կարգի մրցանակի՝ գումարային պարգևատրումով:

1980 թվականին Լուսաշխի տան երգչախումբը հյուրընկալել է Չեխոսլովակիայի Լիբերեց քաղաքից ժամանած «Եշտեղ» երգչախմբին: Նրանք հանդես են եկել Համամիութենական առաջին փառատոնի շրջանակներում: Խումբը հյուրընկալվել էր Էրեբունի հյուրանոցում և, բացի համերգներից, նրանց համար կազմակերպված էր հագեցած մշակութային ծրագիր՝ շրջագայություններ Հայաստանի տեսարժան և պատմամշակութային վայրերում՝ Գառնի, Գեղարդ, Էջմիածին, Սևան:

1981 թվականին երգչախմբի գործունեության 50-ամյա հոբելյանի առթիվ կայացած համերգների մասին անդրադարձներ են տեղ գտել «Սովետական դպրոց», «Երեկոյան Երևան» թերթերում:

«Երևանի երգչախմբային ընկերության դահլիճում հավաքվել էին մայրաքաղաքի դպրոցների ուսուցիչներ, աշակերտներ, կոմպոզիտորներ, խմբավարներ, գրողներ: Նրանք եկել էին մասնակցելու հանրապետության լուսավորության աշխատողների տան երգչախմբի 50-ամյա հոբելյանին:

Բացման խոսքով հանդես եկավ Հայաստանի երգչախմբային ընկերության նախագահ, հանրապետության ժողովրդական արտիստ Էմմա Ծատուրյանը: Նա նկարագրեց այն հետաքրքիր ու գունեղ ճանապարհը, որ անցել է երգչախումբն իր ստեղծման օրից:

.....Երգում էին ընդամենը ութ հոգով՝ համոզված, որ իրենց երգով կվարակեն շատերին: Այդպես էլ եղավ: Հնուտ խմբա-

վարներ Կարո Կարապետյանի, Հովհաննես Վերանյանի, կոմպոզիտորներ Դանիել Ղազարյանի, Մարտին Մազմանյանի ղեկավարած երգչախումբը գրկաբաց ընդունեց մայրաքաղաքի ուսուցիչ-ուսուցչուհիներին: Այսօր երգչախումբը, որ ղեկավարում է Լուիզա Զեյթադյանը, հարստացրել է իր երգացանկը: Ինչպես հայկական և ռուսական, այնպես էլ մեր մեծ Միության և արտասահմանյան ժողովուրդների երգերը տարբեր ժամանակներում հնչել են Կիրովականում, Էջմիածնում, Լենինականում, Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, Մերձբալթյան հանրապետությունների մայրաքաղաքներում: Մանկավարժները հյուրախաղերով հանդես են եկել Բուլղարիայում ու Ռումինիայում: Շուտով նրանց երգը կծածանվի նաև Չեխոսլովակիայում:

Հետաքրքիր դեպքերով ու հանդիպումներով է հյուսվել երգչախմբի 50-ամյա պատմությունը: Այդ մասին իր հուշերը պատմեց առաջին խմբավարներից մեկը՝ կոմպոզիտոր, հանրապետության ժողովրդական արտիստ Մարտին Մազմանյանը: Նա հպարտությամբ նշեց, որ ո՛չ պատերազմի բոցը, ո՛չ էլ զրկանքներով լի դժվարին օրերը չկոտրեցին մանկավարժ-երգիչների ազգային ոգին: Միշտ և ամենուրեք նրանք հայկական երգերը հնչեցրել են բարձր, անլռելի զանգակների պես:

Մ. Մազմանյանը դրվատանքի խոսքեր ասաց Լուիզա Զեյթադյանի մասին, որը երգչախումբը հասցրել է պրոֆեսիոնալ մակարդակի:

Այնուհետև ելույթներ ունեցան 1942 թվականից մինչև այսօր երգչախմբի անդամներ Նազիկ Աղաջանյանը, Քնարիկ Օհանյանը, Մարջիկ Բաղդասարյանը և ուրիշներ» [11]:

«(...) Հայկական խմբերգային արվեստի զարգացմանը մատուցած ծառայությունների համար երաժշտական այս կոլեկ-

տիվին տասը տարի առաջ շնորհիվեց «ժողովրդական»-ի պատվավոր կոչում: Խումբը համերգային շրջագայությունների է մեկնել ինչպես Սովետական Միության տարբեր քաղաքներ, այնպես էլ արտասահմանյան երկրներ: Երևանի խմբերգային արվեստի տան դահլիճում տեղի ունեցավ հանրապետական մրցույթի դափնեկիր լուսավորության աշխատողների հանրապետական տան ժողովրդական երգչախմբի ստեղծման 50-ամյակին նվիրված հանդիսավոր երեկո: (...) Երգչախմբի մի խումբ մասնակիցների հանձնվեցին պատվոգրեր և նվերներ:

Այնուհետև երգչախումբը Լ. Զեյթադյանի ղեկավարությամբ հանդես եկավ համերգային ընդարձակ ծրագրով: Կատարվեցին հայ դասական և ժամանակակից, ինչպես նաև ռուս և արևմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ» [12]:

1982 թվականին կայացավ երգչախմբի պատասխան այցը Չեխոսլովակիա. շրջագայեցին Պրահայում, Բոնո, Օլոմոուց, Լիբերեց քաղաքներում և «Բարձր տատրաներ» լեռնային հանգրստավայրում:

Չեխական մամուլն արձագանքեց այս իրադարձությանը «Երևանցի երգիչները Լիբերեցում» հոդվածով.

«Համերգի ունկնդիրները գեղեցիկ երեկո անցկացրին Լիբերեցում, որը Լիբերեցի «Կոլոսեյում» դահլիճում այս օրերին կազմակերպել էին Լիբերեցի և Լիտումերժիցեի միջնակարգ մանկավարժական դպրոցները:

Մանկապարտեզների ապագա ուսուցիչները, որոնցից կազմված է Լիբերեցի երգչախումբը, դոկտոր Վերա Սոկոլովայի և Մտանիսլավ Սուվայի ղեկավարությամբ երգեցին իրենց ծրագիրը, որը բաղկացած է ժամանակակից սովետական և մեր (չեխական) կոմպոզիտորների և մեր ժողովրդական երգերից:

Միասնական համերգին Լիբերեցի երգչախումբը հրավիրել էր նաև Լիտումերժիցեի միջնակարգ մանկավարժական դպրոցի երգչախմբին, որը համալրեց ծրագրի երկրորդ կեսը՝ երկու խմբերն էլ Կոլոսեյի լեփ-լեցուն դահլիճում ներկայացան որպես փորձառու և հասուն երգչախմբեր: Համերգը կրում էր «Բարեկամության համերգ» խորագիրը:

Լիբերեցի «Եշտեդ» երգչախումբը հյուրընկալեց այս օրերին 35 անդամից կազմված Լուսաշիսի տան երկսեռ ժողովրդական երգչախմբին, որը գործունեություն է ծավալում Երևանում: Հայ հյուրերը ժամանել էին անսպասելի շուտ, բայց մանկավարժական դպրոցի խմբավար Վերա Սոկոլովայի շնորհիվ համերգին միացավ նաև երևանյան խումբը:

Ունկնդիրների սպասումներն ավելի քան արդարացան: Ծրագրի երրորդ մասում Երևանի խումբը երգեց հայ կոմպոզիտորների և որոշ աշխարհահռչակ դասական ստեղծագործություններ՝ Լուիզա Նիկիտիչնա Զեյթադյանի ղեկավարությամբ:

Խումբը ցուցադրեց մեկնաբանության իր բարձր ունակությունը և հնչողական հավասարակշռությունը (բալանս): Ունկնդիրների համար հաճելի անակնկալ էր, երբ ծրագրի ավարտին բեմ բարձրացան Լիբերեցի «Եշտեդ» երգչախումբը և հայկական խմբի հետ միասին երկու ստեղծագործություններ երգեցին՝ Բ. Մմետանայի «Վաճառված Հարսնացու»-ի նախաբանի երգչախմբային հատվածը և հայ ժողովրդական «Կողբա ելան սելերը» երգը:

Երկու երգերն էլ բուռն ծափահարությունների արժանացան ունկնդիրների կողմից: Բարձր գնահատվեց Երևանի երգչախմբի լեզվական մաքրությունը և Մմետանայի ստեղծագործության մեկնաբանության ճշգրտությունը: Երկու երգերն էլ Երևանի

խումբը ևս մեկ անգամ կատարեց: Համերգին հաճելի հյուրերին ողջունելու էին եկել դր. Բ. Շտիկարը, Չեխիայի Կոմունիստական կուսակցության հանրային խորհրդի քաղաքական աշխատակիցը և լուսավորության աշխատողների արհմիության ներկայացուցիչ Վ. Ստուխլիկովան:

Երևանի երգչախմբի այցի վերջում «Եշտեղ» խումբն ընկերական երեկո էր կազմակերպել «Նա Լետնե» հյուրանոցում, որտեղ եշտեղիները երգեցին և նվագեցին սիրելի հյուրերի պատվին և նրանց միացան Երևանի խմբի բոլոր անդամները: Հայաստանից ժողովրդական երգչախումբն այսպիսով փոխադարձեց «Եշտեղի» այցը Հայաստան: Հաջորդ օրը հայ երգչախումբը մեր շրջանային քաղաքի և մշակույթի ներկայացուցիչների կողմից հյուրընկալվեց Լիբերեցի քաղաքապետարանում» [20]:

Jerevanští zpěváci v Liberci

Pěkný večer prožili návštěvníci koncertu, který uspořádala v minulých dnech v libereckém Koloseu střední pedagogická škola v Liberci. Budoucí učitelky mateřských škol, z nichž je liberecký sbor sestaven, zazpívaly pod vedením dr. Věry Sokolové a Stanislava Súvy svůj repertoár, jež tvoří současná tvorba našich a sovětských skladatelů a naše lidové písně. Na společný koncert pozvali Liberečtí také pěvecký sbor střední pedagogické školy z Litoměřic, který vyplnil druhou část programu. Oba sbory se představily naplněnému sálu Kolosea jako zkušená a vyspělá pěvecká tělesa. Koncert byl uspořádán na počest 65. výročí VRSR.

Liberecký pěvecký sbor Ještěd KSČ, a předsedkyně OVOS V. Stuchlíková.

Na závěr pobytu jerevanského sboru uspořádal pěvecký sbor Ještěd v hotelu „Na Letné“ přátelský večer, kde „ještědáci“ milým hostům zahráli k tanci a do společenské zábavy zapojili všechny členy jerevanského sboru. Národní pěvecký sbor z Arménie tak oplatil Ještědu jeho návštěvu v Arménii. Druhý den byl arménský sbor přijat na liberecké radnici také představiteli našeho okresního města a liberecké kultury.

Další den koncertoval už Ještěd v Ústí nad Labem. Přijal pozvání krajského kulturního střediska a vystoupil v koncertní a výstavní síni B. Smetany. Koncertoval společně se smíšeným pěveckým sborem pedagogické fakulty a SK SSM z Ústí n. L. v pravidelném abonentním koncertě. Umělecký vedoucí Ještědu dr. Jiří Holnér a dirigent Stanislav Súva představili ústeckému obecenstvu postupně komorní ženský sbor, mužský sbor a smíšený pěvecký sbor. Ústecké hudební obecenstvo přijalo výkon libereckých zpěváků uznalým potleskem.

J. Tobiš

Հաջորդող տարիների անխոնջ կատարողական գործունեության մասին կրկին կարելի է պատկերացում կազմել անձնական արխիվում տեղ գտած բազմաթիվ համերգային ծրագրերի և հրավիրատուների առկայությունից. կայացել են բազմաթիվ համերգներ, ունկնդիրներին ներկայացվել հարուստ և բազմազան երկացանկեր:

Ինչպես ինքը՝ Լուիզա Ջեյթադյանն է խոստովանել, այս երգչախումբը նաև երաժիշտների պատրաստման դարբնոց էր: Նրա անդամներից ոմանք, ձեռք բերելով երգելու անհրաժեշտ ունակություններ և սեր դեպի երաժշտությունը, կարողացել են իրենց ուսումը շարունակել երաժշտական ուսումնարանում և կոնսերվատորիայում: Նրանցից շատերն այժմ երգում են պետական կապելլայում, որոշ մասն էլ աշխատում է դպրոցներում՝ որպես երգ-երաժշտության դասատուներ և երգեցիկ խմբերի ղեկավարներ:

Գլուխ 6.

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԻՐՈՒՄ

Հարցազրույցների շարք Լուիզա Ջեյթադյանի նախկին ուսանողների հետ

Լուսինե Ազարյան

Խմբավար, օպերային երգչուհի, ԵՊԿ դասախոս և մանկավարժ

«Ամենահաճելի հիշողություններից մեկը կապված է առաջին անգամ նրա մոտ դասի գնալու հետ: Երբ առաջին դասին նա ցույց տվեց առաջին դիրքը, ես ձեռքերս պետք է պահեի կրծքավանդակի մակարդակին, և քանի որ ես էլ խոշորամարմին էի, ձեռքերս բավական խոշոր էին, նայելով այդ դիրքին՝ իրեն հատուկ անմիջականությամբ ասաց. «Վայ, մամա ջան, դու միշտ պիանո ցույց կտաս, մեկ է, դու հենց ձեռքերդ բարձրացնես, երգիչները ֆորտե կերգեն»: Այսինքն՝ դրանով ցույց տվեց ինձ, որ ես պետք է միշտ զգույշ աշխատեմ, քանի որ ձեռքերս իրենց կառուցվածքով արդեն տպավորիչ են:

Իմ հիշողության մեջ միշտ վառ են և գործնականում կիրառելի խմբավարի ժեստիկուլյացիայի վերաբերյալ նրա մասնագիտական նկատառումները: Միշտ նշում էր, որ խմբավարի ժեստը պիտի հստակ լինի, չէր սիրում անորոշ ժեստեր, որոնք շփոթեցնում են խմբին, և ինչպես կյանքում էր շիտակ (ես նրան այդպես եմ հիշում, որևէ խառը պատմությունների մասնակից չդարձող), այնպես էլ գործի մեջ սիրում էր ժեստի հստակությունը, չափավորված, կշռադատված շարժուձևը: Դա հենց նրա-

նից է ձևավորվել իմ մեջ՝ որպես մասնագիտական հատկանիշ և որակ, ինչը և ես եմ կիրառում ու փոխանցում ուսանողներին իմ դասավանդման պրակտիկայում»:

Լյուբա Հովհաննիսյան

Մեղրիի թիվ 1 երաժշտական դպրոցի երգչախմբի խմբավար

«1974 թվականին ընդունվել եմ Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի խմբավարական բաժին՝ Լուիզա Նիկիտիչնա Զեյթադյանի դասարան: Այսօր իմ բոլոր հաջողությունները ես կապում եմ նրա հետ: Բացի խմբավար լինելուց՝ նա ինձ համար եղել է հոգատար, նվիրված ընկեր: Նրա հետ կարող էիր կիսվել, խորհուրդներ հարցնել: Իր տեսակով նա բարի, համբերատար, մարդկային անձնավորություն էր, միևնույն ժամանակ՝ խստապահանջ: Նրա անցկացրած ամեն մի դասը մի հեքիաթ էր խմբավարական արվեստում: Մի դեպք պատմեմ իմ հիշողություններից:

Երբորդ կուրսում խմբավարները պրակտիկա էին անցնում՝ պարապելով ուսումնարանի երգչախմբի հետ: Ես պետք է առաջին անգամ պարապեի այդ երգչախմբի հետ: Շատ անհանգիստ էի, բայց հոգու խորքում վստահ էի, որ ինչպես մյուս դասախոսները, այնպես էլ իմ դասախոսը հարկ եղած դեպքում ինձ օգնության կհասնի: Բայց ինձ համար անսպասելի այդ օրը նա գնաց և նստեց դահլիճի վերջում և մինչև վերջ ոչ մի ձայն չհանեց: Ես այդ օրը կորցրի ինձ, չկարողացա պարապել և նեղսրտած մոտեցա նրան, որպեսզի խոսենք, քննարկենք: Նա լուռ լսեց, լսեց ու ասաց. «Եթե ես այսօր մյուսների նման օգնեի և քո փոխարեն պարապեի, ապա դու կվարժվեիր դրան և ուշադրությունդ միշտ

դեպի հետ կլինեիր, կլինեիր անվստահ: Մեկ անգամ կընկնես, կբարձրանաս, կհուսահատվես, կուրախանաս, բայց հույսդ կդնես քեզ վրա, և այդ ժամանակ դու կհասնես հաջողություններին»:

Հաճախ էր պատահում, որ նա ուսուցիչների երգչախմբի պարապմունքներին չէր ներկայանում՝ պատճառաբանելով, որ լավ չի զգում և ինձ էր ուղարկում պարապելու՝ հետագայում խոստովանելով, որ դիտավորյալ չի եկել պարապմունքի:

Հիմա ես անչափ հպարտ եմ, որ Լուիզա Զեյթադյանի ուսանողն եմ եղել, իմ բոլոր հաջողություններն ու հաղթանակները նրանն են: Շնորհակալ եմ Աստծուն, որ նման մանկավարժ եմ ունեցել»:

Արթուր Հակոբյան

Խմբավար, նախկինում Աղձքի միջնակարգ դպրոցի երգչախմբի ղեկավար և երգեցողության ուսուցիչ, Պոլիտեխնիկ ինստիտուտի երգչախմբի ղեկավար, պետական ակադեմիական կապելլայի նախկին երգիչ

«Միաժամանակ շատ դյուրին և շատ բարդ է բառերով արտահայտել, թե ո՞վ է եղել ինձ համար Լուիզա Նիկիտիչնան... ընկեր, դասախոս, թե՞ հարազատ բարեկամ:

Իմ՝ որպես մասնագետ կայանալու ճանապարհին նա հանդիսացել է ամենակարևոր մարդկանցից մեկը և խոր հետք է թողել իմ կյանքում: Լուիզա Նիկիտիչնան ամեն կերպ նպաստել է իմ մասնագիտական ձևավորմանը:

Պատկերացրեք՝ ես ակկորդեոնահար էի և որքան ուժեղ եմ, որ ու աշխատանք է նա ներդրել, որ ես դառնամ խմբավար:

Դասերից բացի, հաճախ կանչում էր տուն՝ լրացուցիչ պարապմունքների: Պարտադիր հետաքրքրվում էր արդյոք քաղցած չե՞մ, հոգնած չե՞մ: Եվ այդպես ուշադիր էր ոչ միայն իմ նկատմամբ, այլ բոլորի հանդեպ: Իր ուսանողների համար նա և՛ դասախոս էր, և՛ ընկեր, և՛ երկրորդ մայր:

Նունեն՝ դուստրը, միշտ պատրաստ էր սեղան գցել և հոգ տանել ցանկացած տուն եկած ուսանողի մասին: Ես մինչ օրս էլ կապ եմ պաշտպանում Լուիզա Նիկիտիչնայի ընտանիքի հետ: Այժմ բնակվում եմ Մոսկվայում, բայց ամեն Երևան գալիս գնում եմ իրենց տուն, որ կարոտս առնեմ.....»:

Սարգիս Դեմիրճյան

Կիպրոսի Մելքոնյան և Նիկոսիայի հայկական վարժարանների երաժշտության ուսուցիչ և խմբավար, այժմ՝ թոշակառու

«Զգիտեմ որտեղից սկսել, այնքան շատ են հիշողությունները, որը պատմել, որը թողնել: Բայց միշտ առաջին տպավորությունը և հիշողությունն ամենաթարմն են մնացել:

1975 թվականին, երբ առաջին անգամ որպես ուսանող ոտքս դրեցի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի շենին, տնօրենն ինձ ուղարկեց առաջին հարկի լսարաններից մեկը (համարը հիմա չեմ հիշում արդեն)՝ ծանոթանալու իմ նոր դասատուի հետ՝ ասելով հետևյալ խոսքերը. «Բախտավոր ես, որ քեզ ուղարկում եմ ամենաուժեղ մասնագետի մոտ»: Դասարանը գտա և ներս մտա, մի քանի ուսանողներ կային դասարանում, իսկ դաշնամուրի մոտ մի կին էր նստած, ու պարապում էին:

Երբ բարևեցի արևմտահայերենով, նա վեր կացավ և մո-

տեցավ ինձ: Նախ բարևեց ձեռքով, ապա իր լենինականյան բարբառով ասաց՝ բարի եկար: Այդ բուպեին ինձ թվաց, որ հարազատ մայրս ինձ գրկեց, այնքան ջերմ էր մեր գրկախառնությունը: Այդ դասատուն Լուիզա Զեյթադյանն էր:

Այդ վայրկյանից Լուիզա Զեյթադյանն ինձ համար եղավ դասատու, ընկեր և երկրորդ մայր օտարության մեջ: Անցան շատ տարիներ, բայց մինչև այժմ հիշողությանս մեջ այդ հանդիպումը շատ վառ է մնացել:

Մեծ է Լուիզա Նիկիտիչնայի դերն իմ կյանքում՝ որպես ուսուցիչ և մարդ: 4 տարի սովորելով նրա մոտ՝ ես ձեռք բերեցի բնավորության մի քանի հատկանիշներ՝ նախ և առաջ ինքնավստահություն, կարգապահությունը շատ կարևոր դեր խաղաց ուսման տարիների ընթացքում, լրջությամբ սկսեցի մոտենալ հանձն առած աշխատանքին:

Մեկ այլ կարևոր բան, որ նրանից սովորեցի, և որը շատ օգտակար եղավ ինձ իմ հետագա մասնագիտական աշխատանքի մեջ, հետևյալն էր. դասարանից ներս՝ ուսուցիչ-աշակերտ, դասարանից դուրս ուսուցիչ-աշակերտ ընկերական հարաբերություններն էին, որը կիրառեցի իմ ամբողջ աշխատանքային տարիների գործունեության մեջ՝ Կիպրոսի հունական և հայկական դպրոցներում պաշտոնավարելիս:

Մկրտիչ Բաբաջանյան

Երգիչ, դիրիժոր

«Կարևոր չէ, թե որքան ժամանակ է անցել.....ամեն անգամ լսելիս Լուիզա Նիկիտիչնայի անունը, իմ մեջ արթնանում են ամենաջերմ հիշողությունները, շնորհակալության և երախ-

տապարտության անսահման զգացումն այն ամենի համար, ինչը ձևավորեց ինձ որպես երաժիշտ, երգիչ և դիրիժոր: Դեպի դիրիժորություն առաջին քայլերն ինձ ցույց է տվել Լուիզա Ջեյթադյանը: Նա մի նոր աշխարհ բացեց իմ առջև, մի անփորձ երիտասարդի, որը գրեթե ոչինչ չգիտեր դիրիժորության մասին, և սեր արթնացրեց դեպի այդ բարդագույն, բայց հիանալի մասնագիտությունը:

Լինելով խիստ՝ միաժամանակ մայրական ջերմությամբ սովորեցրեց ինձ դիրիժորության տեխնիկան, պարտիտուրի ընթերցման գաղտնիքները և հավատ ներշնչեց ինձ, որ դիրիժոր կդառնամ»:

Նունե Մելիքության

Ա. Բաբաջանյանի անվան ուսումնարանի դիրիժորախմբավարական բաժնի վարիչ, երգչախմբի ղեկավար

«Սովորել եմ Լ. Ջեյթադյանի մոտ Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում 1983-1987 թվականներին:

Ծանոթացել եմ 1982 թվականի սեպտեմբերին, երբ պիտի պատրաստվեի ուսումնարան ընդունվելուն և սկսեցի մասնավոր դասեր առնել: Առաջին անգամ հանդիպել եմ Լ. Ջեյթադյանի բնակարանում. հիշում եմ խիստ կեցվածքով և պահանջներով, բայց մարդամոտ, մայրական ջերմությամբ էր մոտենում սովորողին: Մինչ օրս էլ ես աշխատում եմ հենց իմ ուսուցչի շնորհիվ՝ իմ մեջ արմատացնելով նրա սկզբունքները, անփոխարինելի դպրոցը և փոխանցելով իմ ուսանողներին (նույնիսկ ձեռքերի շարժումները): Լուիզա Ջեյթադյանն իմ մեջ սերմանեց սեր դեպի

խմբավարական արվեստը՝ տալով ոչ միայն տեսական գիտելիքներ, այլև պրակտիկ գործունեությամբ կրթեց մեզ:

4 տարվա ընթացքում միայն լավ հուշեր ունեցա նրանից, դասավանդում էր նաև երգչախմբագիտություն և մեթոդիկա, այսինքն՝ դասավանդում էր նաև ամբողջ կուրսին, որը, ի դեպ, ամենամեծ կուրսն էր և ամենափայլունը, միայն 7 հոգի այդ կուրսից ավարտեցին կարմիր դիպլոմներով:

Ուսման տարիներին ուսանողներով հաճախում էինք նրա երգչախումբը և փորձ ձեռք բերում: Լուսաշխի տան երգչախումբ, որը նա էր ղեկավարում, հաճախում էին ամենատարբեր տարիքի երգիչներ, ուսանողներ, դասատուներ, նաև թոշակառու կանայք, և նա իր բոլոր ուսանողներին առաջարկում էր երգել երգչախմբում՝ պրակտիկ փորձ ձեռք բերելու համար: Ես ինքս էլ շարունակում եմ այս ավանդույթն իմ ուսանողների հետ: Թե՛ փորձեր անելու և թե՛ հանգստանալու համար հաճախ էր ուղեգրով կազմակերպում ուղևորություններ դեպի Դիլիջան:

1986 թվականին իր 60-ամյա հոբելյանի առիթով երգչախմբային ընկերության դահլիճում կազմակերպել էինք համերգ, և տարբեր երգչախմբեր էին եկել՝ նաև շնորհավորելու և ողջունելու սիրելի խմբավարին: Հանդես եկանք հետաքրքիր ծրագրով. Կոմիտաս, Ռոբերտ Պետրոսյան, Գունտ («Մահ և կյանք» օրատորիայից հատված), Կոզլովսկի-Ռեքվիեմ, հատվածներ Գերշվինի «Պորգի և Բես» օպերայից, Սմետանայի «Վաճառված հարսնացուն» օպերայից: Համերգից հետո տեղի ունեցավ հյուրասիրություն, որի համար հատուկ մայրիկս թխել էր էլլերներ, և ես դրանք բերել էի միջոցառման համար:

Որպես խմբավար՝ Լուիզա Ջեյթադյանը նախընտրում էր հանձնարարել ստեղծագործություններ պետական ակադեմիա-

կան կապելլայի երգացանկից: Հաճախ էր քննություններին հրավիրում նաև կապելլայի երգիչներին, որոնք մեծ սիրով մասնակցում էին պետական ավարտական քննություններին:

Ուսանողներին համար թերևս ամենազնահատելին այն էր, որ երբեք չէր խառնվում ուսանողի աշխատանքին երգչախմբի հետ: Միշտ խրախուսում էր աշխատել ինքնուրույն, իսկ երգչախմբի առջև երբեք ուսանողին դիտողություններ չէր անում, ասելիքը միշտ ասում էր դասարանում՝ առանձին: Նպաստում էր, որ խմբավարը կարողանա լեզու գտնել երգչախմբի հետ, կայանա որպես խմբավար: Ինքս էլ եմ կիրառում այս սկզբունքը, այն ուսանողին դարձնում է ավելի ինքնուրույն:

Հաշվի էր առնում նաև ուսանողների ցանկությունները. Օրինակ՝ երրորդ կուրսում ես ցանկություն հայտնեցի կատարել Ռոբերտ Պետրոսյանի «Անմահության կանտատ»-ի առաջին մասը, ինքն անմիջապես զանգահարեց կոմպոզիտորին և խնդրեց նոտաները:

Մեծ էր մեր զարմանքը, երբ հաջորդ օրը դասարանի դուռը բացվեց, և ներս մտավ Ռոբերտ Պետրոսյանն ու նոտաները հանձնեց նրան: Մա վկայում է այն մասին, որ ինքը ժամանակի երաժիշտների շրջանում վայելում էր մեծ հարգանք, և նրա խոսքը միշտ կշիռ ուներ:

Շատ հումորով էր, երբեմն սիրում էր հենց Գյումրվա բարբառով հումորներ անել: Միշտ հոգատար էր ուսանողների հանդեպ. մի անգամ Դիլիջանում անձրևից թրջվել էի, և նա ինձ տվեց իր հողաթափերը և թեյ հյուրասիրեց:

Արդեն այն ժամանակահատվածում, երբ ամբիոնի վարիչ չէր, միևնույն է, միշտ հանդես էր գալիս ուսանողի շահերից և պաշտպանում նրանց:

Պատմում էր, որ որպես խմբավար բեմ է բարձրացել նաև կապելլայի հետ:

Միշտ հպարտանում էր իր սաներով: Հիացմունքով էր հիշում իր առաջին սաներից մեկին՝ դիրիժոր և խմբավար Գևորգ Մուրադյանին, ասում էր, որ ինքն է տարել Գևորգին Մոսկվա՝ ընդունվելու:

Նրա մասին շատ ջերմ հուշեր է պատմել նաև խմբավար Տիգրան Հեքեքյանը, ով խոստովանել է, որ չլինել Լուիզա Ջեյթադյանը, ինքը խմբավար չէր դառնա:

Կարելի է ասել, որ նրա բոլոր ուսանողները, կամ այն երաժիշտները, որոնք ինչ-որ կերպ առնչվել են Ջեյթադյանի հետ, բռնել են խմբավարության ուղին: Արդարացիորեն պետք է նշել, որ նա դաստիարակեց գործող և տաղանդավոր խմբավարների մի ամբողջ սերունդ: Նույնիսկ իր ուսանողներին հետագայում շարունակում էր ուղղորդել, երբ արդեն նրանք սովորում էին կոնսերվատորիայում:

Նրա մահվանից հետո ես հանդիպեցի դստերը՝ Նունեին, և որոշեցիք նրա ծննդյան 80-ամյակի համար մի միջոցառում պատրաստել: 2006 թվականի հունիսի 22-ին կամերային երաժշտության տանը երկուսուկես ժամ տևած հուշ-երեկոյին մասնակցեցին իր ուսանողները, կոլեգաները, պատմեցին իրենց հուշերը, հանդես եկան Էջմիածնի մշակույթի տան երգչախումբը (ղեկավար՝ Մարիկա Եղիզարյան), Հայաստանի փոքրիկ երգիչներ երգչախումբը (գեղ. ղեկավար՝ Տիգրան Հեքեքյան):

Նունե Մելիքսեթյանն անկեղծորեն խոստովանում է, որ մինչև այժմ էլ իր ուսուցչի թողած մեծ հետքն է լուսավորում իր ճանապարհը՝ որպես խմբավարի: Տասը տարի Նունե Մելիքսեթյանը ղեկավարել է Առնո Բաբաջանյանի անվան երաժշտա-

մանկավարժական քոլեջի՝ տարբեր երաժշտական մրցույթների դափնեկիր երգչախումբը: Երաժշտություն է դասավանդել ԱՅԲ ավագ դպրոցում: Այժմ ղեկավարում է Ալ. Հեքիմյանի երաժշտական դպրոցի երգչախումբը և քոլեջի խմբավարության ամբիոնը: Կոմպոզիտոր Ռոբերտ Պետրոսյանի դստեր հետ միասին հավաքել, կազմել և տպագրության է պատրաստել կոմպոզիտորի ստեղծագործությունների ժողովածուները:

Բազմաբնույթ գործունեությանը զուգահեռ՝ Նունե Մելիքսեթյանը սովորում է նաև սիմֆոնիքի ժողովրդություն Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում և շարունակում է իր մասնագիտական նվիրումով վառ պահել մեծ ուսուցչի հիշատակը և էստաֆետը փոխանցել հաջորդ սերունդներին:

Գևորգ Մուրադյան

Դիրիժոր, խմբավար, Արցախի պետական կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավար և դիրիժոր

«Երաժշտությամբ սկսել եմ զբաղվել բավականին ուշ՝ 17 տարեկան հասակում: Կուլտուրայի տանը ես սկսել էի հաճախել ակորդեոնի խմբակ և կարճ ժամանակում հասցրել էի առաջադիմել: Դասատուս մայրիկիս հայտնել էր, որ ես բավական լավ երաժշտական ընդունակություններ ունեմ և խորհուրդ տվեց ու ինքն էլ տարավ ինձ այն ժամանակ Ռոմանոս Մելիքյանի անվան ուսումնարանի տնօրեն Գոհար Աղասովնայի մոտ, որպեսզի ընդունվեմ և շարունակեմ կրթությունս: Քննությունը շատ լավ հանձնելուց հետո անակնկալ տեսանք, որ իմ անունը հայտնվել է խմբավարական բաժնի սովորողների ցուցակում: Եվ այդպես ես ընդունվեցի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսում-

նարան՝ Լուիզա Ձեյթադյանի դասարան: Այն միտքը, որ ես պետք է դիրիժոր դառնամ, ինձ ներարկել է Լուիզա Ձեյթադյանը, և դա ինձ արդեն հանգիստ չէր տալիս, ներսից կրծում էր: Հենց առաջին կիսամյակում ես կարողացա գերազանց առաջադիմություն ցույց տալ բոլոր առարկաներից, իմ աշխատասիրությունը ձիրքի հետ միասին տվեց առաջին պտուղները: Երաժշտական ուսումնարանն ավարտեցի գերազանցությամբ:

Ուսման առաջին ակնթարթներից, դեռ ոչ մի խմբավարական հիմունքի չտիրապետելով՝ Լուիզա Նիկիտիչնան եղավ այն դասատուն, ով ինձ կրթեց բառիս լայն իմաստով: Աշխատում էր ձեռքերիս վրա, նրա հետ միասին կարդում էինք գրքեր, քննարկում, ես հաճախում էի նաև նրա ղեկավարած Լուսաշխի տան երգչախումբ, բարիտոն էի երգում, և արդեն մեր շփումը կրում էր նաև պրակտիկ բնույթ: Ես սպունգի պես ներքաշում էի նրանից ամբողջ ինֆորմացիան, սովորում ինչպես հաղորդակցվել երգչախմբի հետ:

Լուիզա Ձեյթադյանը ձեռքերի դրվածքի մեջ շատ առաջադեմ էր, չէր սիրում կաշկանդել պեղանտիզմով, նրա մոտ ամեն ինչ տրամաբանորեն շաղկապված էր՝ ներքին իմպուլսը, ժեստը, միմիկան: Սկզբնական շրջանում, իհարկե, դնում էր որոշակի շրջանակի մեջ, իսկ հետագայում արդեն թողնում էր ազատ շնչել: Այդպես էր նաև հետագայում՝ Մալունցյանի մոտ ուսանելու ընթացքում:

Լուիզա Ձեյթադյանը սերտ կապի մեջ էր նաև երգչախմբային ընկերության հետ, իսկ նրա պրոֆեսիոնալ կարողությունները ես առավել ցայտուն նկատեցի Հովհաննես Չեքիջյանի մոտ՝ ակադեմիական կապելլայում աշխատելու տարիներին:

1965 թվականին Հայաստանում պետք է կատարվեր Գ.

Սվիրիդովի Պաթետիկ օրատորիան, և այդ նպատակով Հայաստան էր ժամանել դիրիժոր Յուրլովը: Լուիզա Նիկիտիչնան ինձ տարավ Յուրլովի մոտ, որ ինձ լսի: Կոնսուլտացիայից հետո Յուրլովը գովեստի խոսքեր և արժեքավոր խորհուրդներ տալուց հետո առաջարկեց ինձ ընդունվել Մոսկվայում Գնեսինների անվան ինստիտուտ:

Մակայն, երբ ես գնացի Մոսկվա, որոշեցի, ինչո՞ւ ոչ, ընդունվել կոնսերվատորիա: Իմ երազանքն էր սովորել Սվեշնիկովի մոտ, բայց Մոսկվա մեկնելու մտքից մայրիկիս մոտ ծանր ապրումներ առաջացան, և ես որոշեցի թողնել ու վերադառնալ Երևան: Զեյթադյանը խորհուրդ տվեց ընդունվել կոնսերվատորիա՝ Մ. Մալունցյանի դասարան: Մեծ դժվարություններից հետո կոնսերվատորիայում բացվեց կրկին սիմֆոնիկ ժորության բաժինը, և ես ընդունվեցի կոնսերվատորիա:

1972 թվականին Ռաֆայել Մանգասարյանն ինձ առաջարկեց աշխատել ռադիոյի նվագախումբում, և առաջինը, որ ես արեցի, խորհրդակցեցի Լուիզա Զեյթադյանի հետ, քանի որ նույնիսկ կոնսերվատորիայում ուսանելիս ես նրա հետ անընդհատ կապի մեջ էի և մասնագիտական գրեթե բոլոր հարցերով միշտ խորհրդակցում էի նրա հետ:

1983 թվականին ինձ համակեց մի հանդուգն միտք՝ մասնակցել Մոսկվայում կայանալիք դիրիժորների Համամիութենական մրցույթին: Այնտեղ արժանացա դիպլոմի և հանձնաժողովի կողմից շատ պարտավորեցնող խոսքերի. ասացին, որ հույս ունեն՝ դեռ իմ մասին ապագայում շատ կլսեն: Դրանից հետո ինձ նախարարությունից գործուղեցին Ավստրիա՝ կատարելագործվելու: Այս գործընթացին նորից ակտիվ մասնակցություն ունե-

ցավ Լուիզա Զեյթադյանը, և ես 1 տարի ապրեցի և սովորեցի Վիեննայում:

1988-ից հետո ես հանդիպեցի Լորիս Ճգնավորյանի հետ, որն առաջարկեց միասին աշխատել ֆիլհարմոնիայում: Այդպես ես ստեղծեցի ֆիլհարմոնիայի երգչախումբը, սակայն 2004 թվականին ՀՀ կառավարության և Հայկական բարեգործական ընկերության առաջարկով ես տեղափոխվեցի Արցախ, հիմնեցի Արցախի պետական կամերային նվագախումբը, որը ղեկավարում եմ մինչ օրս:

Եվ այսպես, կարող եմ հավաստել, որ իմ մասնագիտական ուղու սկզբնավորման և կայացման մեջ մեծ և առաջնային դեր է ունեցել Լուիզա Նիկիտիչնա Զեյթադյանը, որին ես միշտ հիշում եմ ջերմ զգացումներով և երախտագիտությամբ»:

**ԼՈՒԻԶԱ ԶԵՅԹԱՂՅԱՆԻ ՊԱՐԳԵՎՆԵՐԸ ԵՎ
ՊԱՏՎՈԳՐԵՐԸ**

1. 1968, պատվոգիր Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի երգչախմբին (ղեկ.՝ Լ. Զեյթադյան), ՀամԼԿԵՄ 50-ամյակին նվիրված «Բեմի վրա է արվեստի երիտասարդությունը» մրցանակաբաշխությանը մրցանակային տեղ շահելու համար:
2. 1970, Պատվոգիր հասարակական ակտիվ աշխատանքի համար, Հայկ. ՍՍՌ Լուսավորության, բարձրագույն դպրոցի և գիտական հիմնարկների աշխատողների արհմիության ռեսպուբլիկական կոմիտեի կողմից:
3. Պատվոգիր, Կիրովականի «Հայկական Արտեկ» պիոներական ճամբարում բարձր մակարդակով գեղարվեստական սպասարկման համար, Անտառային, թղթի և փայտամշակման արդյունաբերության բանվորների արհմիության հանրապետական կոմիտեի նախագահություն:
4. 1957թ., բրոնզե մեդալ, Հայաստանի երիտասարդության առաջին ֆեստիվալի լաուրեատ:
5. 1968, ոսկե մեդալ, Սպանդարյան շրջկոմ:
6. 1972-1973, լաուրեատ, մեդալ, սովետական երիտասարդության համամիութենական փառատոն:
7. 1976, վկայական, պարգևատրվել է 1975 թվականի Սոցիալիստական մրցության հաղթողի նշանով:
8. 1980, վկայական, պարգևատրվել է 1980 թվականի Սոցիալիստական մրցության հաղթողի նշանով:
9. Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված երգչա-

խմբերի Հանրապետական մրցույթի դափնեկիր, բրոնզե մեդալ:

10. 1969թ., ՀԱՄԽ-ի պատվոգիր, Երևանի ուսուցչի տան ժողովրդական քառաձայն երգչախմբի կազմակերպման 40-ամյա հոբելյանի առթիվ:
11. 1982, պարգևատրվել է «Ինքնագործ արվեստում նվաճումների համար» Պրոֆեսիոնալ միությունների համամիութենական կենտրոնական խորհրդի նշանով:

ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Մեր երախտագիտության խոսքն ենք հղում բոլոր այն մարդկանց, ովքեր նպաստեցին գրքի լույս աշխարհ գալուն:

Շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանին՝ աշխատության խմբագրման և հետագա աշխատանքներին աջակցելու համար:

Շնորհակալություն ենք հայտնում Լուիզա Զեյթադյանի դստերը՝ Նունե Սարգսյանին՝ խմբավարի անձնական արխիվը տրամադրելու համար:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Լուիզա Զեյթադյանի նախկին ուսանողներին, ովքեր սիրով կիսվեցին մեզ հետ իրենց ջերմ հիշողություններով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրքեր.

1. Ասատրյան Ա., Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ, Երևան, 2007, 135 էջ:
2. Ասատրյան Ա., Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009, 207 էջ:
3. Գրիգորյան Բ., Էմմա Ծատուրյան, Երևան, 1987, 83 էջ:
4. Ծատուրյան Է., Հայաստանի երգչախմբային ընկերության 25 տարին, «Սովետական գրող», 1988, 107 էջ:
5. Շլեպչյան Ս., Երևանի Լուսաշխի տունը 50 տարում, Երևան, 1973, 41 էջ:
6. **Հողվածներ, մամուլի արձագանքներ.**
7. Լուիզա Ջեյթադյանի անձնական արխիվ:
8. «Дебют молодого дирижера», «Կոմունիստ», 20 փետրվարի, 1972 թ.:
9. Պողոսյան Ռ., «Երևանյան բեմահարթակում», «Երեկոյան Երևան», 16 փետրվարի, 1972 թ.:
10. Козловский И., Песнь о жизни. На соискание государственной премии СССР, Правда, 7 августа, 1975 г. (անձնական արխիվ):
11. Անձնական արխիվ, շնորհակալական խոսք:
12. Արքահամյան Ա., Անլրելի զանգակների պես, «Սովետական դպրոց», 4 հունիսի, #23 (2647), 1981 թ.:
13. Հրաչյան Մ., Ժողովրդական երգչախմբի 50 տարին, «Երեկոյան Երևան», 21 մայիսի, # 117 (7182), 1981 թ.:
14. Մաթևոսյան Վ., Բազմավաստակ կոլեկտիվի հորեյանա-

- կան համերգը, «Երեկոյան Երևան», 25 հունիսի, # 145 (3536), 1969 թ.:
15. Առաքելյան Յու., Ուսուցչական երգչախումբը, «Կոմունիստ», սեպտեմբերի 12, 1969 թ.:
 16. Թող աշխարհում թեև թի խաղաղության երգը, «Ավանգարդ», 24 հունիսի, # 75 (7666), 1973 թ.:
 17. Երիտասարդության փառատոնի հաղթողները, «Ավանգարդ», 27 հունիսի, # 76 (7667), 1973 թ.:
 18. Դափնեկիր երգչախմբերը, «Կոմունիստ», 29 հունիսի, 1973 թ.:
 19. Լավ սկիզբ, «Կոմսոմոլեց», # 38 (4304), 29 մարտի, 1973 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբանի փոխարեն	3
Գլուխ 1. Մասնագիտական ձևավորման և կայացման ուղին. Խմբավարական և մանկավարժական գործունեության սկիզբը	5
Գլուխ 2. Մասնագիտական գործունեություն: Լենինականյան ժամանակաշրջանը	13
Գլուխ 3. Մանկավարժական գործունեության հասուն շրջանը Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում	15
Գլուխ 4. Գործունեությունը պետական ակադեմիական կապելլայում	25
Գլուխ 5. Մասնագիտական գործունեությունը Երևանի Լուսաշիի տանը	32
Գլուխ 6. Հիշողությունների ծիրում	46
Լուիզա Ջեյթադյանի պարզևները և պատվոգրերը	59
Երախտագիտության խոսք	60
Օգտագործված գրականության ցանկ	61

ԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ, ԱՐՄԻՆԵ ԲԱԲԱՅԱՆ

**ԼՈՒԻԶԱ ԶԵՅԹԱՂՅԱՆ
ԽՄԲԱՎԱՐԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ**

Խմբագիր՝ Ազատուհի Սահակյան
Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի

Հրատ. պատվեր N 1172
Ստորագրված է տպագրության՝ 1.07. 2022 թ..
Չափսը՝ 60 x 84 1/16, տպագրական 4.75 մամուլ:
Տպաքանակը՝ 150 օրինակ:

ՀՀ ԳԱԱ տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում դասի ընթացքում



Լուիզա Ջեյթալյանը Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի իր դասարանի հետ

Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի դասախոսական կազմը ուսանողական երգչախմբի հետ


Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի խմբավարական բաժնի դասախոսական կազմը տնօրենի և ուսմասվարի հետ, 1976թ.



Ազգային ակադեմիական կապելլայի 1971-72 Լենինգրադում և Մոսկվայում կայացած հյուրախաղերի ժամանակ. Ռուսաստանի պետական երգչախմբի գեղարվեստական ղեկավար Ալեքսանդր Յուրլովի (աջից) և կոմպոզիտոր Ջեյմս Գյոզալյանի հետ



Լուիզա Ջեյթալյանը, 1981թ.



Ազգային ակադեմիական կապելլա, մեջտեղում՝ Հովհաննես Չերիջյան Նստածների թվում են՝ ձախից 2. Խորեն Մեյխանեջյան, 3. Լուիզա Ջեյթալյան, 4. Կառլեն Թոփչյան



Լուսաշխի տան երգչախմբի համերգը (Չեխոսլովակիա, 1982թ.)



Համերգային փորձի ընթացքում (Չեխսլովակիա, 1982թ.)



Լուսաշիի տան երգչախումբը



Լուիզա Ջեյթալյանի 60-ամյա հորեյլանը, 1986թ.



Լուիզա Ջեյթալյանը թոռնուհու՝ Արմինե Բաբայանի հետ, 1989թ.